

Հ Ա Յ Ե Ց Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳԻՐՔԻ

1. Ներածություն

ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի արդի վիճակը

1.1. 1998 թվականին ընդունված և 1999 թվականի հունվարի 12-ից կիրառման մեջ դրված ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Հայաստանի Հանրապետությունում իրականացվող դատաիրական բարեփոխումների արդյունքում ընդունված կարևոր իրավական ակտերից է: Այն անմիջական գործողության օրենք է, որը միասնական, համակարգված և համապարփակ կերպով կարգավորում է քրեադատավարական հասարակական հարաբերությունները: Քրեական գործերով վարույթի կարգը կանոնակարգող նորմատիվ-իրավական ակտերի համակարգում, ըստ իրավաբանական ուժի, Օրենսգիրքը հաջորդում է ՀՀ Սահմանադրությանը:

1.2. Օրենսգիրքն ընդունման պահին բավականին առաջադիմական էր, քանի որ դրանում առաջին անգամ ամրագրվեցին արդարադատության իրականացման ժողովրդավարական հիմնական սկզբունքները և անձի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունն ապահովող երաշխիքները: Բացի այդ, Օրենսգրքում շոշափվում են նաև անձի սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակման հետ կապված առանցքային հարցեր:

1.3. Բարձր գնահատելով Օրենսգրքի ակնհայտ առավելություններն ու դրական նշանակությունը, միաժամանակ պետք է նշել, որ 1995 թվականին ՀՀ Սահմանադրության ընդունումից հետո բավականին կարճ ժամկետում քրեադատավարական նոր օրենսդրությունն օբյեկտիվորեն չէր կարող բավարար չափով իրացնել նորաստեղծ իրավական պետության ժողովրդավարական նվաճումները: Ուստի, Օրենսգիրքն իր դրական հատկանիշներով հանդերձ զերծ չէր նաև թերություններից, որոնց մի մասը առկա էին օրենսգրքի ընդունման պահին, իսկ մյուսներն ի հայտ եկան դրա գործնական կիրառման ընթացքում:

1.4. Օրենսգրքի կիրառման ավելի քան տասը տարիների ընթացքում երկրի հասարակական և քաղաքական կյանքում տեղի ունեցան մի շարք իրադարձություններ, որոնք անխուսափելի փոփոխություններ էին ենթադրում քրեական գործերի քննության և լուծման հետ կապված հարաբերությունները կանոնակարգող հիմնական իրավական ակտում:

1.5. Մասնավորապես, 2002 թվականին Հայաստանի Հանրապետությունը վավերացրեց Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950 թվականի Կոնվենցիան, ինչի հետևանքով երկրի ստանձնած միջազգային պարտավորություններին համահունչ ձևափոխություններ պետք է կատարվեին ներպետական համապատասխան ոլորտներում, այդ թվում քրեական արդարադատության բնագավառում:

1.6. 2005 թվականի նոյեմբերի 27-ին տեղի ունեցած հանրաքվեով երկրի հիմնական օրենքում կատարվեցին հիմնարար փոփոխություններ, որոնք էապես շոշափեցին քրեական արդարադատության ոլորտը՝ անխուսափելի դարձնելով Օրենսգրքում համապատասխան փոփոխություններն ու լրացումները:

1.7. Քրեադատավարական իրավահարաբերությունների կարգավորման գործընթացի վրա նշանակալի ազդեցություն ունեցավ նաև դատական պրակտիկան: Մասնավորապես, Օրենսգրքի գործածության ընթացքում բացահայտված մի շարք թերություններ ու բացփողումներ իրենց գնահատականը ստացան ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում: Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանը 2006-2010

թթ. ընթացքում 19 գործերով քննության է առել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի տարբեր հոդվածների սահմանադրականության հարցը, որից 10 գործերով տարբեր նորմեր ճանաչվել են ՀՀ սահմանադրությանը հակասող և անվավեր: ՀՀ վճռաբեկ դատարանն իր հերթին մի շարք նախադեպային որոշումներում տվել է Օրենսգրքի տարբեր դրույթների մեկնաբանություններ՝ ուղղված իրավակիրառ պրակտիկայի կարգավորմանը(օրինակ՝ կալանավորման կիրառման հետ կապված մի շարք չափանիշների ճշգրտումը): Այս ամենն էապես փոխել է Օրենսգրքի մի շարք դրույթների և նույնիսկ որոշ սկզբունքների իրավաըմբռնման և կիրառման գաղափարախոսությունը:

1.8. Նշված գործընթացներով և ոչ միայն դրանցով պայմանավորված՝ 2004, 2006, 2007 և 2008 թվականներին Օրենսգրքում կատարվեցին էական և լուրջ փոփոխություններ ու լրացումներ, որոնք կիրառման ընթացքում ունեցան ոչ միայն դրական, այլև բացասական դրսևորումներ:

1.9. Չժխտելով փոփոխությունների մի ստվար մասի ողջամիտ և առաջադիմական բնույթը, այդուհանդերձ, չենք կարող չնշել, որ դրանց մեծ մասը կատարվեց առանց հայեցակարգային մշակման և գիտական հիմնավորման: Բացի այդ, փոփոխություններն ու լրացումները համալիր չէին, առավելապես կրում էին դրվագային բնույթ, հաճախ համաձայնեցված չէին իրավական այլ ակտերի, ինստիտուտների և նորմերի հետ:

1.10. Մինչդեռ պետության իրավական համակարգում քրեական դատավարության օրենսգրքի ունեցած դերն ու նշանակությունը միանշանակ թույլ են տալիս եզրակացնել, որ նման իրավական ակտում առկա առանցքային թերություններն ու բացթողումները չեն կարող շտկվել առանձին կամ իրավիճակային փոփոխությունների և լրացումների միջոցով: Հետևաբար, դրանք չէին կարող ծառայել այն նպատակներին, որոնց համար իրականացվում էին:

1.11. Ինքնըստինքյան, նման պայմաններում կատարված փոփոխությունները Օրենսգրքի կարգավորման ոլորտի համար ունեցան նաև շրջադարձային բովանդակային հետևանքներ: 1998 թվականի խմբագրությամբ Օրենսգիրքը, իր բոլոր թերություններով հանդերձ, ուներ ստույգ գաղափարախոսություն և իրենից

ներկայացնում էր որոշակի տրամաբանություն ունեցող համակարգ՝ քրեադատավարական տարբեր ինստիտուտների և սկզբունքների միջև եղած ներքին կապի տեսքով: Վերոնշյալ փոփոխությունները շատ դեպքերում խախտեցին Օրենսգրքի ներքին հավասարակշռությունը, ծնեցին հակասություններ ինչպես դրա տարբեր դրույթների, այնպես էլ Օրենսգրքի և իրավական այլ ակտերի միջև: Քրեադատավարական օրենսդրություն ներմուծվեցին թեև կարևոր, սակայն օտարածին (օրինակ, դատական քննության արագացված կարգը), իսկ երբեմն նաև տարօրինակ ինստիտուտներ (դատարանում առաջադրված մեղադրանքը լրացնելը կամ փոփոխելը), որոնք օրգանապես չինտեգրվեցին գործող համակարգում՝ առաջացնելով բազմաթիվ տեսական ու գործնական խնդիրներ: Մշտական օրենսդրական փոփոխությունները հանգեցրեցին նաև ինստիտուցիոնալ անկայունության, ինչը վերջին տարիներին բացասական ազդեցություն ունեցավ իրավակիրառ և հատկապես դատական պրակտիկայի ձևավորման վրա (բավական է հիշել վճռաբեկ դատարանի գործառույթների և լիազորությունների անհամար և միմյանց հաջորդող փոփոխություններն ու լրացումները):

Կյանքն ապացուցեց, որ մինչ օրս ընտրված ճանապարհն առկա խնդիրների լուծման արդյունավետ տարբերակ չէ:

1.12. Վերը թվարկված գործոնների ամբողջությունը, ինչպես նաև հասարակական հարաբերությունների մշտական զարգացումը ներկայումս հանգեցրել են այնպիսի մի իրավիճակի, որի պայմաններում 1998 թվականի Օրենսգիրքն իր փիլիսոփայությամբ և տրամաբանությամբ, կառուցվածքով և ներուժով, հաջողված և անհաջող փոփոխություններով, ինտեգրված և չինտեգրված ինստիտուտներով, առաջադիմական և ոչ արդիական դրույթներով, բազմատեսակ և իրարամերժ մեկնաբանություններով, խայտաբղետ և հակասական պրակտիկայով օբյեկտիվորեն ի վիճակի չէ համապարփակ կարգավորման ենթարկել քրեական գործերի քննության և լուծման ընթացակարգը, այդ գործընթացի շրջանակներում ապահովել հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանությունը, հետևաբար, և քրեական դատավարության խնդիրների լուծումն ու նպատակների նվաճումը:

1.13. Ներկայումս առկա են բոլոր այն օբյեկտիվ նախադրյալները (իրավական, տնտեսական, սոցիալական, քաղաքական և այլն), որոնց ամբողջությունը թույլ է տալիս խոսել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի մշակման անհրաժեշտության մասին: Ուստի կարծում ենք, որ անցած տասնամյակի ընթացքում ունեցած արդյունքների ամփոփման, քաղաքական դասերի վերլուծության և թույլ տրված սխալների ուղղման տրամաբանական ավարտը պետք է լինի հայեցակարգային հիմքերի վրա դրված, գիտատեսական հիմնավորումներով հագեցած և գործնական փորձով ամրապնդված քրեական դատավարության նոր օրենսգրքի մշակումն ու ընդունումը:

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային բնութագիրը

1.14. Հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության պահանջները և ՀՀ միջազգայնորեն ստանձնած պարտավորությունները, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի (այսուհետ՝ Նախագիծ) մշակման հիմքում պետք է ընկած լինի երկու հիմնարար չափանիշ՝ համարձակ նորարարությունը և չափավոր պահպանողականությունը: Այն առաջին հերթին ընկալվում է որպես ՀՀ քրեադատավարական օրենսդրության զարգացման հաջորդ փուլում կիրառվելիք գաղափարների, ինստիտուտների փորձարկման (ապրոբացիայի) միջոց: Այս առումով Նախագծի մշակումը դիտարկվում է որպես ՀՀ քրեադատավարական օրենսդրության բնականոն զարգացման յուրահատուկ փուլ, ինչը պետք է հնարավորություն ընձեռի խուսափել թռիչքաձև ցնցումներից և ապահովել համեմատաբար ավելի սահուն անցում մեկ համակարգից մյուսին:

1.15. Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ գործող քրեադատավարական համակարգի էությունը կազմող մինչդատական և դատական վարույթների հարաբերակցության կտրուկ փոփոխությունը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ իրավակիրառ պրակտիկայի վրա (մասնագիտական, հոգեբանական, բարոյական և այլ առումներով): Բացի այդ,

այսօր գործող համակարգն էլ տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով (կադրային, նյութական և այլն) պատրաստ չէ նման կտրուկ փոփոխությունների:

1.16. Նախագծը նպատակ է հետապնդում լուծել հետևյալ հայեցակարգային խնդիրները.

Ա) քրեական գործերի քննության և լուծման ընթացքում ապահովել հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանություն՝ իրավունքի հանրաճանաչ սկզբունքների հիման վրա.

Բ) քրեական արդարադատության ոլորտում բարձրացնել դատական իշխանության և դատարանի դերն ու նշանակությունը, ձևավորել դատարանակենտրոն քրեադատավարական ընթացակարգ.

Գ) ստեղծել արդարադատության արդյունավետությունն ապահովող և արդար դատաքննության տարրերի իրականացումը երաշխավորող գործուն կառուցակարգեր, ապահովել տարբեր դատական աստիճանների ներդաշնակ գործառույթային կապը.

Դ) վերաիմաստավորել քրեական դատավարությունում մրցակցության գաղափարախոսությունը, այն դատավարական սկզբունքից վերածել դատավարության ձևի (ռեժիմի), ամրագրել գործուն նախադրյալներ կիսամրցակցային (իսկ առանձին դրվագներում՝ նաև ինկվիզիցիոն) դատավարությունից դեպի լրիվ մրցակցայինի անցնելու համար.

Ե) իրավունքի հանրաճանաչ սկզբունքների հիման վրա երաշխավորել քրեադատավարական ոլորտ ներգրավված անձի իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, մշակել դրանց սահմանափակման համաչափ և թափանցիկ մեխանիզմներ.

Զ) դատավարական իրավահարաբերությունների և գործողությունների հիմքում դնել գործառույթային տարանջատման սկզբունքը, դատավարության սուբյեկտների համար սահմանել բացառապես նրանց դերից, նշանակությունից և կարգավիճակից բխող գործառույթներ և լիազորություններ.

է) մշակել առանձին կատեգորիայի գործերի քննության և լուծման պարզեցված ընթացակարգեր, ապահովելով մարդկային ռեսուրսների, միջոցների և ժամանակի արդարացված խնայողություն,

1.17. Վերը շարադրված հիմնարար խնդիրներով պայմանավորված են Նախագծի մշակման հիմքում ընկած և ՀՀ քրեադատավարական օրենսդրության զարգացման հայեցակարգային հիմնական ուղղությունները: Դրանք են.

ա) քրեական գործերի քննության ընթացքում (հատկապես մինչդատական վարույթում) անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխիքների ամրապնդում, մասնավորապես, պաշտպանության կողմի իրավունքների ընդլայնում և դատական վերահսկողության ինստիտուտի ուժեղացում ու հստակեցում,

բ) դատավարական հարկադրանքի միջոցների, մասնավորապես, ձերբակալման և կալանավորման կիրառման հիմքերի, պայմանների և ընթացակարգերի վերանայում՝ ուղղված դրանց օրինականության նկատմամբ դատական վերահսկողության արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև կալանավորման այլընտրանքային խափանման միջոցների կիրառելիության ընդարձակում,

գ) դատավարության շարժիչ ուժի՝ քրեական հետապնդման ինստիտուտի հիմնարար կարգավորում, դրա դերի և նշանակության, ինչպես նաև իրականացման ձևերի (եղանակների) հստակեցում,

դ) տուժողի իրավական վիճակի վերանայում ուղղված սեփական շահերն արդյունավետ պաշտպանելու նրա հնարավորության մեծացմանը,

ե) արդարացվածին և դատական սխալներից տուժածներին փոխհատուցում տրամադրելու արդյունավետ մեխանիզմների նախատեսում և ընթացակարգի կատարելագործում,

զ) մինչդատական վարույթի ձևերի (հետաքննություն և նախաքննություն) տարբերակման արդյունավետ մեխանիզմի մշակում, մինչդատական վարույթին

մասնակցող պաշտոնատար անձանց (դատախազ, քննիչ, քննչական ստորաբաժանման ղեկավար, հետաքննիչ) գործառույթների հստակեցում, տարանջատում և ներդաշնակում, գործառույթ-ինստիտուտ-լիազորություն շղթայի օրգանական ամբողջականության և լիարժեքության ապահովում,

է) տարբերակված վարույթների շրջանակի ընդլայնում և կատարելագործում, դրանց նկատմամբ հավասարակշռված մոտեցման մշակում ուղղված մի կողմից ռեսուրսների և ժամանակի խնայողությանը, իսկ մյուս կողմից՝ արդարադատության շահերի ներդաշնակ ապահովմանը,

ը) միջանկյալ դատական վարույթի (նախնական դատական լուսմների) ինստիտուտի հիմնադրում մինչդատական վարույթի արդյունքների ամփոփումն ավելի ռացիոնալ դարձնելու և ապագա դատական քննությունն առավել արդյունավետ անցկացնելու համար,

թ) քրեական գործերի քննության ծանրության տեղափոխում մինչդատական վարույթից դատարան, նախաքննության ծավալների ու ազդեցության նվազեցում, դատարանում մրցակցության և կողմերի իրավահավասարության սկզբունքի առավել բարձր երաշխավորվածություն, ապացույցների թույլատրելիության և հավաստիության երաշխիքների ընդարձակում,

ժ) դատական ակտերի վերանայման համակարգի և դրա տարրերի (վերաքննություն, վճռաբեկություն, նոր ի հայտ եկած և նոր հանգամանքներով, ինչպես նաև հիմնարար խախտումների հիմքով վերանայում) իրավական կարգավորման կատարելագործում ուղղված վերանայման մեխանիզմներից յուրաքանչյուրի գործառնական նշանակության ապահովմանը և ողջ համակարգի արդյունավետության բարձրացմանը,

ի) «Կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին համահունչ միջազգային-իրավական համագործակցությանն առնչվող քրեադատավարական ինստիտուտների (հանձնում, օտարերկրյա պետությունների և միջազգային դատարանների դատավճիռների ճանաչում, քրեական վարույթի փոխանցում և այլն) և դրանց իրացումն ապահովող ընթացակարգերի կատարելագործում:

1.18. Նախագիծը բնութագրվելու է մի շարք հիմնարար, սկզբունքային նորամուծություններով, որոնք պետք է էապես բարելավեն, կատարելագործեն քրեադատավարական գործող համակարգը և նպաստեն քրեական արդարադատության արդյունավետության բարձրացմանը: Մասնավորապես նախատեսվում է.

✓ վերացնել քրեական գործի հարուցման (նյութերի նախապատրաստման) փուլը. այն ներառել նախաքննության, որպես մինչդատական վարույթի իրականացման միակ եղանակի, բովանդակության մեջ,

✓ փոխել «հետաքննություն» և «նախաքննություն» սահմանադրական հասկացությունների քրեադատավարական հարաբերակցությունը, օպերատիվ-հետախուզական գործունեությունը ինկորպորացնել քրեական դատավարության օրենսգիրք՝ այն նույնացնելով հետաքննության հետ,

✓ պաշտպանության կողմին վերապահել ապացույցներ ներկայացնելու իրավունք՝ մինչդատական վարույթում փաստաթղթեր և առարկաներ, իսկ դատարանում հետազոտման ենթակա ապացույցների ցանկ ներկայացնելու ձևով,

✓ հստակեցնել ձերբակալման և կալանավորման նպատակը, հիմքերի, պայմանները, ինչպես նաև հարկադրանքի այդ միջոցների կիրառման ընթացակարգերը, ընդլայնել և օպտիմալացնել խափանման միջոցների շրջանակը,

✓ դատական վերահսկողությունը տարածել բնակարանում կատարվող բոլոր քննչական գործողությունների, ինչպես նաև գույքի վրա կալանք դնելու վրա, ընդարձակել մինչդատական վարույթում դատական պաշտպանության իրավունքն՝ այն դարձնելով այլընտրանքային,

✓ քրեական հետապնդման հարուցում համարել դատախազի կողմից անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին քննիչի կայացրած որոշումը հաստատելը, այդ պահին ընդունել որպես չափանիշ անձի նկատմամբ դատավարական հարկադրանքի հիմնական միջոցներ կիրառելու և դատավարական հիմնական ժամկետների հաշվարկման համար,

✓ սահմանել ռեաբիլիտացիայի ինստիտուտ, նախատեսել տվյալ քրեական վարույթի շրջանակներում արդարացվածի կրած վնասների հատուցման հնարավորություն,

✓ մեղադրյալին զրկել սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվության անձեռնմխելիությունից, սահմանափակվելով կամ լռություն պահպանելու, կամ ճշմարտացի ցուցմունք տալու հնարավորություններով: Մեղադրյալի հարցաքննությունը պետք է կատարվի միմիայն մեղադրյալի նախաձեռնությամբ և մեղադրանքի կողմը ոչ մինչդատական վարույթում, ոչ դատական քննության ընթացքում չպետք է իրավունք ունենա հարցաքննել մեղադրյալին, մինչև վերջինիս կողմից ցուցմունք տալու վերաբերյալ ցանկություն դրսևորելը,

✓ նախատեսել մինչդատական վարույթի ընթացքում դատավորի ներկայությամբ անձին հարցաքննելու (ցուցմունքը դեպոնացնելու) ընթացակարգ,

✓ ընդլայնել տարբերակված վարույթների շրջանակը՝ մասնավոր մեղադրանքի գործեր (առանց մինչդատական վարույթի), պարզեցված նախաքննություն և համաձայնեցման վարույթ (դատարանում),

✓ մինչդատական վարույթում նախատեսել դատախազի հայեցողական քրեական հետապնդման, ինչպես նաև ի շահ արդարադատության մեղադրյալի հետ համագործակցության մասին մինչդատական համաձայնագիր կնքելու և դրա հետ կապված հատուկ կարգով դատական ակտ կայացնելու հիմքերը, պայմանները և կարգը,

✓ սահմանել քրեական վարույթի նոր պարտադիր փուլ՝ նախնական դատական լսումներ, որը նախորդելու է դատական քննությանը և ներառելու մինչդատական վարույթի արդյունքների ստուգմանն ու դատական քննության նախապատրասմանն ուղղված բոլոր հարցեր քննարկումն ու լուծումը՝ մրցակցության և կողմերի հավասարության պայմաններում,

- ✓ դատարանին վերապահել պասսիվ արբիտրի դեր, որը լիովին կառավարելու է դատական քննության ընթացքը և միայն բացառիկ դեպքերում է միջամտելու ապացուցման գործընթացին կամ ուղղորդելու այն,
- ✓ ամրապնդել դատարանում ապացույցների հետազոտման անմիջականության և թափանցիկության սկզբունքները,
- ✓ բացառել դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ, իսկ դատախազի կողմից դատական քննության շրջանակներից դուրս մեղադրանք փոփոխելու հնարավորությունը,
- ✓ սահմանել սուբսիդար մեղադրողի ինստիտուտ, երբ դատախազի կողմից մեղադրանքից հրաժարվելու դեպքում դատարանը հնարավորություն կունենա շարունակել դատական քննությունը, եթե դա պահանջում է տուժողը և ստանձնում մեղադրանքի պաշտպանությունը,
- ✓ նախատեսել դատական ակտի կայացման երկփուլ կարգ,
- ✓ ամրապնդել դատական ակտերի սահմանափակ վերանայման սկզբունքը, առանձին բացառություններով, հստակեցել հիմնարար խախտումներով վարույթի նորոգման հիմքերը և կարգը,
- ✓ վերացնել դատական ակտերի կատարումը՝ որպես քրեական վարույթի փուլ:

2. ՄԻՆԶԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

2.1. Մինչդատական վարույթի նպատակը հանրային մեղադրանքի գործերով պարզել հանցագործության հատկանիշները, հայտնաբերել հանցանք կատարած անձին, նրա նկատմամբ հարուցել քրեական հետապնդում, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն կատարելու միջոցով ստեղծել քրեական վարույթը

դատարանում քննելու և լուծելու համար անհրաժեշտ նախադրյալներ ու պայմաններ, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում և կարգով հաստատել քրեական հետապնդման ենթարկված անձի անմեղությունը կամ քրեական վարույթը շարունակելու անհնարինությունը:

2.2. Մինչդատական վարույթի բովանդակությունը կազմող իրավահարաբերությունների և գործողությունների ամբողջությունը պետք է ապահովեն քննության օպերատիվությունը, արագությունն ու արդյունավետությունը, ինչը ենթադրում է դատավարական գործառույթների հստակ տարանջատում՝ անձի իրավունքների և ազատությունների առավելագույն պահպանման պայմաններում:

2.3. Մինչդատական վարույթն իրականացվում է նախաքննության միջոցով: Հետաքննությունը կոչված է օժանդակել նախաքննության առջև դրված խնդիրների լուծմանը: Նախաքննությունն ու հետաքննությունը գտնվում են դատախազական հսկողության, իսկ մինչդատական վարույթն ամբողջությամբ՝ դատական վերահսկողության ներքո:

Նախաքննություն

2.4. Նախաքննությունը սկսվում է հանցագործության մասին հաղորդում ստանալու պահից և ավարտվում քրեական վարույթը դատարան ուղարկելով կամ այն կարճելով: Նախաքննության բովանդակությունը մինչդատական վարույթի նպատակներին հասնելու համար անհրաժեշտ գործողությունների կատարումն է և որոշումների ընդունումը:

2.5. Նախաքննություն կատարելու բացառիկ լիազորությունը պատկանում է քննիչին, որով նա իրացնում է իր քննության գործառույթը: Նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության պայմաններում քննիչն օժտված է հարաբերական դատավարական ինքնուրույնությամբ, որոշում է գործի քննության ընթացքը, ինքնուրույն ընդունում է որոշումներ և կատարում գործողություններ, ինչպես նաև իրավասու է դատախազի հանձնարարությունները կամ որոշումները բողոքարկել վերադաս դատախազին՝ օրենքով նախատեսված

դեպքերում կասեցնելով դրանց կատարումը կամ առանց դրանց կատարումը կասեցնելու:

2.6. Նախաքննությունն իրականացվում է երկու ձևով՝ ընդհանուր և պարզեցված կարգով: Ընդհանուր կարգով իրականացվում են ծանր և առանձնապես ծանր բոլոր հանցագործությունների վերաբերյալ վարույթները, ինչպես նաև միջին ծանրության առանձին հանցագործությունների վերաբերյալ վարույթները: Պարզեցված նախաքննության կարգով իրականացվում են ոչ մեծ ծանրության բոլոր հանցագործությունների, ինչպես նաև միջին ծանրության առանձին հանցագործությունների վերաբերյալ վարույթները:

2.7. Ընդհանուր կարգով կատարված նախաքննությունն ավարտվում է մեղադրական եզրակացությունը դատախազին ուղարկելով կամ քրեական վարույթը կարճելու մասին որոշում կայացնելով:

Հետաքննություն

2.8. Հետաքննությունը մինչդատական վարույթում նախաքննության ընթացքում կիրառվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների և դրանց հետ կապված իրավահարաբերությունների ամբողջությունն է: Հետաքննության նպատակն է նպաստել մինչդատական վարույթի խնդիրների լուծմանը, օժանդակել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ նախաքննություն կատարելուն:

2.9. Օպերատիվ-հետախուզական գործունեությունը քրեական դատավարության օրենսգիրք ինկորպորացնելը և քրեական վարույթի ընթացքում օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման գործընթացը հետաքննություն անվանելը նպատակ է հետապնդում այն դարձնել ավելի կանխատեսելի, ինչպես նաև ներառել դատախազական հսկողության տիրույթ, ինչը քրեական ընթացակարգի շրջանակներում անձի իրավունքների և օրինական շահերի ապահովման կարևոր գրավական է:

2.10. Քրեական վարույթի ընթացքում հետաքննությունը կատարում են այն մարմիններին, որոնք օրենքով իրավասու են իրականացնել օպերատիվ-հետախուզական գործունեություն: Վերջինս դատավարական բնույթ կարող է

ստանալ միայն նախաքննություն կատարող անձի՝ քննիչի նախաձեռնությամբ, երբ նա նախաքննության խնդիրներից ելնելով համապատասխան հանձնարարություններ է տալիս օպերատիվ-հետախուզական գործունեություն (հետաքննություն) կատարող մարմիններին կամ անձանց:

2.11. Հետաքննության շրջանակներում քննիչի հանձնարարությամբ իրականացվող առանձին օպերատիվ-հետախուզական միջոցառումները համարվում են գաղտնի քննչական գործողություններ (օրինակ՝ հեռախոսային խոսակցությունները լսելը, նամակագրությունը վերահսկելը, ներքին դիտումը և այլն), որոնց արդյունքները ապացուցողական նշանակություն են ստանում միայն դատավարական բոլոր երաշխիքների ապահովման պայմաններում (դատարանի որոշում, քննիչի գրավոր հանձնարարություն, օրենքով սահմանված ընթացակարգ և այլն):

2.12. Հետաքննության ծավալները սահմանափակված են մինչդատական վարույթի շրջանակներով: Հետաքննությունը կարող է իրականացվել միայն նախաքննությունը սկսելուց հետո և ինքնըստինքյան վերջանում է նախաքննության ավարտով:

2.13. Հետաքննության օրինականության նկատմամբ իր հսկողական լիազորությունն իրացնելիս դատախազն իրավասու է ստուգել գաղտնի քննչական գործողությունների (օպերատիվ-հետախուզական միջոցառումների) իրականացման հիմքերը, պայմանները և կարգը: Սակայն դատախազական հսկողության օբյեկտ չեն հանդիսանում օպերատիվ գործունեության մեթոդները և հնարքները (օրինակ, գործակալների հավաքագման ձևերը, նրանց տվյալները, ստացված տեղեկատվության մշակումը և այլն):

Մեղադրյալը

2.14. Մեղադրյալ է համարվում այն անձը, ում նկատմամբ որպես մեղադրյալ ներգրավելու մասին կայացված որոշումը հաստատվել է դատախազի կողմից: Հանցանք կատարելու մեջ անմիջականորեն ծագած կասկածանքի հիման վրա

ձերբակալված անձը մեղադրյալ չի համարվում, սակայն օգտվում է մեղադրյալի համար սահմանված բոլոր իրավունքներից և երաշխիքներից:

2.15. Օրենսդրական նման կարգավորումը հնարավորություն է տալիս հրաժարվել «կասկածյալ» սուբյեկտից և միասնական դատավարական կարգավիճակ սահմանել քրեական հետապնդման ենթարկված անձի համար: Դրա շնորհիվ հանցանքի կատարման մեջ կասկածվող անձը օգտվում է մեղադրյալի համար սահմանված բոլոր իրավունքներից:

2.16. Անձին որպես մեղադրյալ ներգրավելու հիմքը նրա կողմից հանցանքի կատարումը վկայող ապացույցների համակցությունն է: Անձի նկատմամբ դատավարական հարկադրանքի հիմնական միջոցները (խափանման միջոցներ, գույքի վրա կալանք դնել, պաշտոնավարության ժամանակավոր դադարեցում, հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելը և այլն) կարող են կիրառվել միայն նրան որպես մեղադրյալ ներգրավելուց հետո:

Ձերբակալում և խափանման միջոցներ

2.17. Ձերբակալումն առանց դատարանի որոշման անձի՝ ՀՀ սահմանադրության 16 հոդվածով սահմանված ազատության իրավունքի սահմանափակումն է:

2.18. Ձերբակալման նպատակը հանցանքի կատարման մեջ կասկածվող անձին դատարան ներկայացնելն է:

2.19. Ձերբակալումը կարող է կիրառվել՝ Ա/ հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում, Բ/ մեղադրյալին դատարան ներկայացնելու կարգադրագրի հիման վրա:

2.20. Դատավարական հարկադրանքի այս միջոցի կիրառումը դիտվում է որպես որոշակի իրավիճակից թելադրվող անխուսափելի միջոցառում, երբ անձի ֆիզիկական ներկայությունն անհրաժեշտ է առանձին դատավարական գործողություններ կատարելու և փաստաթղթեր ձևակերպելու համար:

2.21. Հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալման յուրաքանչյուր դեպքում կազմվում է որոշում, որը ձերբակալված անձին պետք է հանձնվի ոչ ուշ, քան նրան փաստացի արգելանքի վերցնելու պահից 6 ժամվա ընթացքում: Ձերբակալման որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է դատախազին: Ձերբակալման պայմանները, կիրառման կարգը և մյուս երաշխիքները պետք է մանրամասն կարգավորվեն ապագա օրենսգրքում:

2.22. Նշված հիմքով ձերբակալված անձին պետք է մեղադրանք ներկայացվի և մեղադրյալը պետք է տարվի դատարան՝ նրա կալանավորման հարցը լուծելու համար ոչ ուշ, քան ձերբակալման պահից 60 ժամվա ընթացքում: Հակառակ դեպքում անձը պետք է ազատ արձակվի:

2.23. Եթե ձերբակալված անձը ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման: Կալանավորման հարցը քննարկելիս դատարանը պետք է ստուգի նաև ձերբակալման օրինականությունն ու հիմնավորվածությունը:

2.24. Չձերբակալված մեղադրյալին կալանավորելու անհրաժեշտության դեպքում քննիչը նրան դատարան ներկայացնելու կարգադրագիր է արձակում: Եթե ձերբակալման պահից 24 ժամվա ընթացքում անձը դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման:

2.25. Անձը կարող է ազատությունից զրկվել միայն այն դեպքում, երբ արդեն առկա են հանցագործությանը նրա առնչությունը հաստատող փաստական տվյալներ, այլ ոչ թե անձին հարկավոր է ձերբակալել՝ հանցագործությանը նրա առնչությունը պարզելու համար: Այս կանոնն էապես բարձրացնում է անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի պաշտպանվածությունը:

2.26. Օրենսդրական նման կարգավորումը բխում է habeas corpus հիմնադրույթից, ըստ որի գործում է ձերբակալման անօրինականության կանխավարկածը, քանի դեռ դատարանը չի հաստատել հակառակը, ինչպես նաև

Եվրոպական Կոնվենցիայի 5-րդ հոդվածի պահանջներից, որոնք կոչված են անձին ապահովագրել անհիմն ազատագրկումից:

2.27. Խափանման միջոցները կարող են կիրառվել միայն անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը դատախազի կողմից հաստատելուց (քրեական հետապնդում հարուցելուց) հետո:

2.28. Նախագծի հիմնական բնութագրական գծերից մեկը խափանման միջոցների շրջանակի ընդլայնումն է: Նոր խափանման միջոցների (ոստիկանությունում հաշվառվելը, տնային կալանքը և այլն) սահմանումը, ինչպես նաև գրավը որպես ինքնուրույն խափանման միջոց նախատեսելը պետք է նպաստեն իրավակիրառ պրակտիկայում անհիմն կամ հարկադրված կալանավորումների թվի կրճատմանը:

2.29. Կալանավորումը մեղադրյալի նկատմամբ կարող է ընտրվել միայն այն դեպքում, երբ խափանման մյուս միջոցները չեն կարող ապահովել կամ երաշխավորել մեղադրյալի պատշաճ վարքագիծը և հանրային շահերի համաչափ պաշտպանությունը:

2.30. Նույն նպատակին պետք է ծառայեն նաև կալանավորման և մյուս խափանման միջոցների կիրառման հիմքերի ու պայմանների սահմանազատումը, ինչպես նաև կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու և կալանավորման ժամկետի երկարացման հիմքերի տարանջատումը:

2.31. Մեղադրյալի նկատմամբ առաջին անգամ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու համար կարող է բավարար լինել մեղսագրվող հանցանքը կատարելու մեջ հիմնավոր կասկածի առկայությունը: Այդ դեպքում կալանավորումը կարող է կիրառվել մինչև մեկ ամիս ժամկետով: Անթույլատրելի է կալանավորման ժամկետի երկարացումը միայն հիմնավոր կասկածի առկայության հիմքով:

Մրցակցության փարրերի ուժեղացումը

2.32. Քրեական դատավարության մրցակցային բնույթը ենթադրում է նաև այդ սկզբունքի առանձին տարրերի ներմուծումն ու կիրառումը մինչդատական վարույթում նախաքննության ընթացքում: Գործող իրավակիրառ համակարգը քրեադատավարական օրենսդրության զարգացման ներկայիս փուլում թույլ չի տալիս մինչդատական վարույթում լիարժեք մրցակցություն ապահովել, սակայն առկա անհավասարությունը կարող է էապես մեղմվել մեղադրյալի և պաշտպանի որոշ իրավունքներ ընդլայնելու միջոցով: Միաժամանակ այս փուլում մրցակցության լրացուցիչ տարրերի ներմուծումն արդարացված է այնքանով, որքանով դա բացասաբար չի անդրադառնա վարույթի արդարացի քննության վրա և չի հանգեցնի չարաշահումների:

2.33. Այս առումով առաջարկվող առաջին քայլը քրեական վարույթում մեղադրյալի հայտնվելու պահից պաշտպանի պարտադիր մասնակցությունն է, ինչպես նաև պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքերի շրջանակի ընդլայնումը և այն ոչ սպառիչ դարձնելը:

2.34. Քրեական վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, քանի դեռ մեղադրյալը նրանից չի հրաժարվել օրենքով սահմանված կարգով: Նշված կարգի խախտումով մեղադրյալի տված ցուցմունքը չի կարող դրվել մեղադրական դատավճռի հիմքում, եթե մեղադրյալն այն չեն հաստատել դատարանում:

2.35. Օրենքով քրեական վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր դարձնող հիմքերից թեկուզև մեկի առկայության դեպքում պաշտպանից հրաժարումը չի ընդունվում և գործում է մեղադրյալի պաշտպանության սուբյեկտիվ իրավունքի հարկադիր իրականացման կանոնը:

2.36. Նախաքննության փուլում մրցակցության ընդլայնմանն ուղղված քայլերից մեկը ապացուցողական զանգվածի ձևավորման գործընթացում պաշտպանին լրացուցիչ իրավունքների վերապահումն է: Մասնավորապես, պաշտպանը պետք է անվերապահորեն իրավունք ունենա մասնակցել 1) իր միջնորդությամբ կատարվող բոլոր քննչական և այլ դատավարական գործողություններին, 2) իր պաշտպանյալի միջնորդությամբ կատարվող քննչական և այլ դատավարական գործողություններին, 3) իր պաշտպանյալի մասնակցությամբ կատարվող քննչական և այլ

դատավարական գործողություններին: Նույն կանոնները պետք է գործեն նաև մեղադրյալի մասնակցությամբ կամ պաշտպանի միջնորդությամբ կատարվող փորձաքննությունների դեպքում:

2.37. Մինչդատական վարույթում մեղադրյալի իրավունքների ընդլայնումը ենթադրում է, որ ձերբակալված կամ կալանավորված մեղադրյալը պետք է անվճար բժշկական հետազոտություն անցնելու և եզրակացություն ստանալու իրավունք ունենա: Բացի այդ, նախաքննության ավարտին գործի նյութերին ծանոթանալուց հետո մեղադրյալը և/կամ նրա պաշտպանը պետք է իրավունք ունենան միջնորդություն ներկայացնել մեղադրյալի դեմ ցուցմունք տված դատավարության սուբյեկտին հարցեր տալու քննչական գործողություն կատարելու վերաբերյալ, ինչով կապահովվի նաև Եվրոպական Կոնվենցիայի վեցերորդ հոդվածով նախատեսված իրավունքի իրացումը:

2.38. Հիմնվելով պաշտպանի կողմից վարույթն իրականացնող մարմնին տրամադրված դատավարական տեղեկատվության օրինականության կանխավարկածի վրա, նրա ներկայացրած նյութերը համարվում են թույլատրելի ապացույց, քանի դեռ վարույթն իրականացնող մարմինը չի ապացուցել հակառակը: Ընդ որում, պաշտպանի ներկայացրած փաստաթղթերը կամ առարկաները բոլոր դեպքերում պետք է մնան քրեական գործի նյութերում անկախ դրանց նկատմամբ վարույթն իրականացնող մարմնի վերաբերմունքից: Դրա հետ մեկտեղ պաշտպանը պահպանում է անձանց հարցման ենթարկելու և փորձագետի կարծիք հարցնելու իրավունքները:

2.39. Նախաքննության ընթացքում մրցակցության տարրերի ամրապնդման երաշխիքներից մեկը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակների ընդլայնումն է: Մասնավորապես, քննչական գործողություններ (խուզարկություն, առգրավում, զննություն) կատարելու համար անձի բնակարան կարելի է մուտք գործել միայն դատարանի որոշմամբ, բացառությամբ դեպքի վայրի զննություն կատարելու դեպքերի: Ընդ որում, բնակարանում կատարվող յուրաքանչյուր քննչական գործողության հիմքերը, պայմանները և շրջանակները պետք է հստակ սահմանվեն օրենքով: Բացի այդ,

գույքի վրա կալանք դնելը, պաշտոնավարության ժամանակավոր դադարեցումը ևս պետք է կատարվեն դատարանի որոշմամբ, բացառությամբ անհետաձգելի դեպքերի, երբ հարկադրանքի այդ միջոցների անհապաղ չկիրառումը կարող է հանգեցնել բացասական հետևանքների: Այս դեպքում քրեական հետապնդման մարմինը անհապաղ սակայն ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում պետք է համապատասխան որոշումը ներկայացնի դատարանի հաստատմանը (հետագա դատական վերահսկողություն):

2.40. Օրենսդրական նման կարգավորումը լուրջ նախապայման կդառնա մինչդատական վարույթում անձի սահմանադրական իրավունքների և ազատությունների երաշխավորման համար: Պետք է սահմանվի հետագա դատական վերահսկողության այնպիսի ընթացակարգ, երբ քրեական դատավարության մասնակիցները պետք է քրեական վարույթն իրականացնող սուբյեկտի որոշումները և գործողությունները նախ բողոքարկեն դատախազին, իսկ վերջինիս կողմից դրանք չբավարարելու դեպքում նոր միայն դիմեն դատարան: Դրա հետ մեկտեղ ապագա օրենսգրքում անհրաժեշտ է որոշակիացնել դատական վերահսկողության այդ տեսակի առարկան, այսինքն՝ սպառնիչ թվարկել բողոքարկման ենթակա որոշումները և գործողությունները:

2.41. Որպես մինչդատական վարույթում պաշտպանության կողմի իրավունքների ընդլայնման միջոց ապագա քրեական դատավարության օրենսգրքում անհրաժեշտ է նախատեսել այն դրույթը, ըստ որի դատավարության մասնակիցները, ծանոթանալով փորձաքննություն նշանակելու մասին քննիչի որոշմանը, կարող են առաջադրել լրացուցիչ հարցեր, որոնք քննիչը պարտադիր պետք է ընդգրկի փորձաքննություն նշանակելու մասին որոշման մեջ: Դատավարության մասնակիցներն պետք է իրավունք ունենան սեփական նախաձեռնությամբ առանց քննիչի հայեցողության քրեական վարույթի իրականացնող մարմնի կողմից նշանակված փորձագետին առաջադրել հարցեր:

2.42. Միաժամանակ եթե քննիչը փորձագետի եզրակացության պարզաբանման և ճշտման նպատակով կատարում է փորձագետի հարցաքննություն, ապա նշված հարցաքննությանն իրենց ցանկության դեպքում

պետք է պարտադիր մասնակցելու և իրենց նախընտրած հարցերը տալու իրավունք ունեն դատավարության մասնակիցները: Այս երկու առաջարկությունների՝ ապագա քրեադատավարական օրենսգրքում նախատեսման առաջնային նպատակը հատուկ գիտելիքներին առնչվող ապացույցների ձեռք բերման առումով մեղադրանքի և պաշտպանության կողմերի հնարավորությունների հավասարումն է:

3. Քրեական հետապնդման հարուցումը

3.1. Քրեական հետապնդում հարուցելը անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին քննիչի որոշման հաստատումն է հսկող դատախազի կողմից¹:

3.2. Քրեական հետապնդումը վարույթի շարժիչ ուժն է, քանի որ դրա հետագա իրականացումից կամ հրաժարումից է կախված վարույթի ընթացքը և բովանդակությունը: Քրեական հետապնդում հարուցելը նախաքննության շրջադարձային ենթափուլ է:

3.3. Քրեական հետապնդման հարուցումը դատախազի բացառիկ լիազորությունն է: Դատախազը պետության քրեական քաղաքականությունն իրացնող և դրա համար պատասխանատու պաշտոնատար անձ է, որին պատկանում է քրեական գործերով քրեական հետապնդման տնօրինման իրավասությունը, այսինքն՝ քրեական հետապնդում հարուցելու, ինչպես նաև դրանից ձեռնպահ մնալու բացառիկ լիազորությունները: Քրեական հետապնդում հարուցելու՝ դատախազության բացառիկ լիազորության առանձնացումը նախ և առաջ ուղղված է դրա առանձնահատուկ նշանակության ընդգծմանը: Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության գործառույթի սահ-

¹ Այս հարցով ՀՀ գլխավոր դատախազությունը առաջարկում է այլ մոտեցում, այն է, որ քրեական հետապնդման հարուցում պետք է հանդիսանա անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին դատախազի որոշումը, այլ ոչ թե դատախազի կողմից քննիչի նման որոշման հաստատումը:

մանման պայմաններում դատախազությանը մեկ այլ՝ քրեական հետապնդում հարուցելու գործառույթի վերապահումը վկայում է քրեական դատավարությունում դրա բացառիկ նշանակության մասին: Սահմանադրությունը, տարանջատելով քրեական հետապնդման հարուցումը դատախազական հսկողության գործառույթից, նպատակ է հետապնդել նշել առաջինի առանձնահատուկ նշանակությունը: Այսինքն՝ քրեական հետապնդման հարուցում պետք է դիտել մինչդատական վարույթում այնպիսի դատավարական գործողության կատարումը կամ որոշման ընդունումը, որը, դուրս լինելով դատախազության հսկողական լիազորությունների շրջանակից, բեկումնային կլինի մինչդատական վարույթի համար և կկանխորոշի քրեական դատավարության հետագա ընթացքը:

3.4. Սա ուղղակիորեն բխում է ՀՀ Սահմանադրության 103 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետից և պայմանավորված է քրեական քաղաքականության իրականացման գործում դատախազի ունեցած դերով: Դատախազը մեղադրական գործառույթի հիմնական իրականացնողն է: Հետևաբար, վերջինս չի կարող վճռական դերակատարություն չունենալ քրեական դատավարության ընթացքում բեկումնային համարվող այնպիսի գործառույթի իրականացմանը, ինչպիսին քրեական հետապնդման հարուցումն է: Քանի որ դատախազն է դատարանում հանդես գալիս որպես մեղադրող և գործը դատարան է ուղարկում միայն մեղադրյալի մեղավորության մասին՝ քննությամբ հավաքված ապացույցներով ձևավորված համոզմունքի հիման վրա, հետևաբար, քրեական դատավարության համար կենտրոնական նշանակություն ունեցող այնպիսի ակտի կայացման գործում, ինչպիսին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումն է, չի կարող դրվագային դերակատարում ունենալ:

3.5. Քրեական հետապնդման հարուցման նույնացումը որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման հաստատման հետ պայմանավորված է ինչպես մինչդատական վարույթի, այնպես էլ ամբողջ քրեական դատավարության համար դրա ունեցած նշանակությամբ և կենտրոնական տեղով: Այդ պահից անձին ներկայացվում է սկզբնական պաշտոնական մեղադրանքը: Թեև այն վարույթի հետագա քննության ընթացքում կարող է փոփոխվել և կատարելագործվել, սակայն նույնիսկ իր սկզբնական տեսքով գործի հետագա քննության համար ունի մեծ

կազմակերպական և ուղղորդիչ նշանակություն: Որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման նշանակությունն ընդգծում է նաև այն, որ այդ պահից են ըստ էության սկիզբ առնում մեղադրյալի մասնակցությամբ ընթացող հիմնական քրեադատավարական հարաբերությունները:

3.6. Քրեական հետապնման հարուցումը չի կապվում ձերբակալման հետ: Եթե ձերբակալման համար բավարար է անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայությունը, ապա որպես մեղադրյալ ներգրավելու համար անհրաժեշտ է հավաստի ապացույցների համակցություն: Ձերբակալված անձն առանց իրեն մեղադրանք ներկայացնելու կարող է մնալ առավելագույնը 60 ժամ: Այդ է պատճառը, որ մինչդատական վարույթի կենտրոնական ենթափուլն ու շարժիչ ուժը հանդիսացող քրեական հետապնդման հարուցումը չի կարելի կապել ձերբակալման հետ, առավել ևս հաշվի առնելով այն, որ այդ ժամկետը լրանալուց հետո հնարավոր է որ բացակայեն անձին որպես մեղադրյալ ներգրավելու հիմքերը: Այսինքն՝ քրեական հետապնդումը ենթադրում է դրա իրականացում որոշակի տևական ժամանակահատվածի ընթացքում:

3.7. Քրեական հետապնդման հարուցումը մեղադրայլի ի հայտ գալու հետ կապելն ունի նաև իր սահմանադրական հիմքերը: ՀՀ Սահմանադրության 66 հոդվածի համաձայն. «Պատգամավորին չի կարելի որպես մեղադրյալ ներգրավել, կալանավորել կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցել՝ առանց Ազգային ժողովի համաձայնության»: Այսինքն՝ պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Ազգային ժողովի համաձայնությամբ: Հետևաբար, եթե պատգամավորը ձերբակալվում է անմիջականորեն ծագած կասկածանքի հիման վրա, սակայն Ազգային ժողովը որպես մեղադրյալ ներգրավելու համաձայնություն չի տալիս, ոչ թե դադարեցվում է արդեն իսկ հարուցված քրեական հետապնդումը, այլ քրեական հետապնդում ընդհանրապես չի հարուցվում: Նույն երաշխիքն է սահմանված նաև դատավորների համար:

3.8. Վերը նշված մոտեցումը բխում է նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայից և

Եվրոպական դատարանի ձևավորած նախադեպային իրավունքից: Մասնավորապես Եվրոպական դատարանն Իսկուբետն ընդդեմ Բելգիայի գործով իր 28.10.1999թ-ի որոշման մեջ ուղղակիորեն նշել է. «Կոնվենցիայի հոդված 6-ը կիրառվում է այն դեպքում, երբ «քրեական մեղադրանքը» ներկայացվել է որոշակի անձի, այսինքն այն բանից հետո, երբ այդ անձը «պետական իշխանության իրավասու մարմնի կողմից պաշտոնապես տեղեկացվել է իր կողմից քրեորեն պատժելի իրավախախտում կատարելու վերաբերյալ ենթադրության առկայության մասին»: Եվ ընդհակառակը, «մեղադրանքը» բացակայում է, ոստիկանական քննություն հարուցելու, վկաների հարցաքննություն կամ այլ գործողություններ կատարելու դեպքում, որոնք շահագրգիռ անձի վրա ուղղակի ազդեցություն չեն գործում:

3.9. Քրեական հետապնդման հարուցման վերը նշած մոդելն իր արտացոլումն է ստացել Արևելաեվրոպական որոշ երկրների քրեադատավարական օրենսգրքերում: Մասնավորապես, Լատվիայի քրեական դատավարության օրենսգրքի համաձայն քրեական հետապնդումը հարուցվում է քննությունից հետո, երբ ապացույցների որոշակի համակցության հիման վրա որոշում է կայացվում անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին (402 և 403 հոդվածներ): Ավելին, առանձին հատուկ վարույթների առկայության դեպքում երբեմն քրեական հետապնդման հարուցումը կապվում է գործը դատարան ուղարկելու հետ (Լատվիայի քր. դատ. օր-ի 431 հոդվածի 3-րդ մաս): Քրեական հետապնդում հարուցելու իրավունքը պատկանում է դատախազին (Լատվիայի քր. դատ. օր-ի հոդվածներ 39, 402, 403):

3.10. Որպես մեղադրյալ ներգրավելու մասին քննիչի որոշումը հաստատելուց հետո դատախազը կարող է մասնակցել քննիչի կողմից մեղադրանքի ներկայացմանը (առաջադրմանը) և դրան հաջորդող մեղադրյալի հարցաքննությանը: Նման կարգավորումը նպատակ ունի բարձրացնել դատախազի պատասխանատվությունը մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը հաստատելիս և ապահովել դատախազի կողմից քրեական հետապնդման հարուցման արդյունավետ իրականացումը: Դա կնպաստի նաև դատախազի կողմից հետաքննության և

նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության և դատարանում մեղադրանքի պաշտպանության գործառույթների արդյունավետ իրականացմանը:

3.11. Քրեական հետապնդում հարուցելու հետ է կապվում դատավարական ժամկետների մեծ մասի հոսքը և հաշվարկը (քրեական հետապնդման, քրեական վարույթը կասեցնելու, կալանավորման ժամկետները): Այն հիմք է նաև մեղադրյալի նկատմամբ դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու համար: Բացառություն է կազմում միայն ձերբակալումը, որը կարող է կիրառվել նաև մինչև քրեական հետապնդում հարուցելը:

3.12. Նախաքննության ընթացքում կիրառվող ժամկետների հաշվարկն առավելապես պետք է կապված լինի քրեական հետապնդում հարուցելու հետ: Նախաքննության ընթացքում անձը մեղադրյալի կարգավիճակում կարող է գտնվել սահմանափակ ժամկետով՝ կախված նրան մեղսագրվող արարքի ծանրության աստիճանից:

3.13. Քրեական հետապնդման ժամկետի կիրառումը չի կարելի կապել կալանավորման ժամկետի հետ, քանի որ քրեական հետապնդման ժամկետները հոսում են անկախ անձի նկատմամբ կիրառված հարկադրանքի միջոցից: Հետևաբար, նույնիսկ կալանքից ազատելու դեպքում անձի նկատմամբ կարող են կիրառվել դատավարական հարկադրանքի միջոցներ և իրավունքների սահմանափակումներ (օրինակ՝ գույքի վրա կալանք դնելը, չհեռանալու մասին ստորագրություն վերցնելը և այլն):

3.14. Եթե անձը ներգրավվել է որպես մեղադրյալ, սակայն թաքնվում է քննությունից կամ նրա գտնվելու վայրը հայտնի չէ, քրեական հետապնդման ժամկետը կարող է կասեցվել մինչև անձին հայտնաբերելը: Անձի ի հայտ գալուց հետո քրեական հետապնդման ժամկետը վերսկսվում է: Եթե նախաքննության ժամանակ հանցանք կատարած անձը չի հայտնաբերվում, ժամկետը հոսում է մինչև քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետի ավարտը:

3.15. Քրեական հետապնդում հարուցելու սահմանադրական գործառույթի բաղկացուցիչ մասն է հանդիսանում դատախազի հայեցողական քրեական

հետապնդման լիազորությունը: Համաձայն դրա՝ արարքի վտանգավորության աստիճանը (ոչ մեծ ծանրության հանցագործություններ), մեղադրյալի անձը և մի շարք այլ հանգամանքներ (գործուն գոյալ, վնասը հատուցել և այլն) հաշվի առնելով դատախազն իրավունք ունի չհարուցել քրեական հետապնդում կամ որոշակի պայմանների առկայության դեպքում դադարեցնել հարուցված քրեական հետապնդումը: Նշված ինստիտուտը ենթադրում է օրենսդրական մշակվածության բարձր աստիճան և անհրաժեշտ իրավական երաշխիքներով ապահովվածություն, մասնավորապես, տուժողի կողմից դատախազի համապատասխան որոշումը դատարան բողոքարկելու հնարավորություն:

4. Քննիչի, դատախազի և քննչական ստորաբաժանման ղեկավարի գործառույթները քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում

4.1. Մինչդատական վարույթում գործող այս սուբյեկտների փոխհարաբերությունների կանոնակարգման հիմքում պետք է դրվի գործառույթային տարանջատման սկզբունքը: Փոխհարաբերությունների առանցքը սուբյեկտ-գործառույթ-լիազորություն շղթան է: Մեկ սուբյեկտը չպետք է միջամտի մյուսի գործառույթի իրականացմանը կամ կրկնօրինակի այն: Միաժամանակ նշված սուբյեկտների լիազորությունները պետք է օրգանապես բխեն նրանց գործառույթներից և սահմանվեն այն հաշվով, որպեսզի ապահովեն հակակշիռների կառուցակարգեր, այլ ոչ թե ձևավորեն ենթակայության հարաբերություններ:

4.2. Մինչդատական վարույթում քննիչի միակ գործառույթը քննության իրականացումն է, նախաքննություն կատարելը: Այս գործառույթի իրականացման շրջանակներում քրեական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության համար քննիչը լիազորված է ինքնուրույն ուղղություն տալ քննությանը, ընդունել անհրաժեշտ որոշումներ և իրականացնել համապատասխան քննչական և այլ

դատավարական գործողություններ: Քննիչը պատասխանատու է նախաքննության ընթացքի, իր ընդունած որոշումների և իրականացրած գործողությունների համար: Քննիչի դատավարական ինքնուրույնությունը նշանակում է նաև, որ իրավունք ունի դատախազի հանձնարարությունները և որոշումները բողոքարկել վերադաս դատախազին, ինչպես նաև հսկող դատախազին բողոքարկել քննչական ստարաբաժանման ղեկավարի հանձնարարություններն ու որոշումները:

4.3. Սահմանադրության 103-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով դատախազն օժտված է հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու բացառիկ գործառույթով: Նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողությունը ենթադրում է դատախազի կողմից օրենքի խախտումների բացահայտմանը, վերացմանը և նախազգուշացմանն ուղղված իր հսկողական լիազորությունների իրացում:

4.4. Թեև նախաքննությունը գրեթե ամբողջությամբ գտնվում է դատախազական հսկողության ներքո և քննիչի կողմից ընդունվող որոշումները և իրականացվող գործողությունները դատախազական հսկողության պարտադիր օբյեկտ են, սակայն հաշվի առնելով բացառապես քննիչի կողմից քննության գործառույթի իրականացման հանգամանքը և ելնելով քննիչի, որպես նախաքննություն իրականացնող պաշտոնատար անձի, օրինապահության կանխավարկածից, դատախազը կարող է ստուգել միայն արդեն ընդունված որոշման կամ կատարված գործողության օրինականությունը, ինչպես նաև դրա արդյունքում ձեռնարկել օրինականության խախտումների վերացմանն ուղղված միջոցառումներ:

4.5. Նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողությունը ներառում է այնպիսի լիազորություններ, ինչպիսիք են քննիչին օրինականության խախտումների վերցմանն ուղղված հանձնարարություններ տալը, քննչական գործողությունների կատարմանը մասնակցելը, քննիչի գործողությունների դեմ բերված բողոքները քննելը, քննիչի ընդունած որոշումները վերացնելը, քննիչին վարույթից հեռացնելը, մեղադրական եզրակացությունը կամ մեղադրական ակտը հաստատելը և այլն:

4.6. Դատախազական հսկողության սահմանադրական գործառույթի իրացումը չի նշանակում դատախազի կողմից քննության ընթացքի կանխորոշում կամ ուղղորդում, քննիչի փոխարեն որոշումների ընդունում կամ գործողությունների կատարում: Նման մոտեցման պայմաններում անհարկի չի սահմանափակվի նաև քննիչի դատավարական ինքնուրույնությունը:

4.7. ՀՀ-ում մինչդատական վարույթն իրականացնող մարմինների գոյություն ունեցող համակարգի պայմաններում քննչական ստորաբաժանման ղեկավարը պետք է օժտված լինի քննության գործընթացը կազմակերպելու և ապահովելու, այսինքն՝ գերատեսչական վերահսկողություն իրականացնելու գործառույթով, ինչը ենթադրում է իր ենթակայությամբ գործող քննիչների նկատմամբ մեթոդական, կազմակերպական և աշխատանքների արդյունավետ իրականացման համար վերահսկողական լիազորությունների իրականացում: Դրանք պետք է ուղղված լինեն քննիչի գործունեությանը օժանդակելուն:

4.8. Միաժամանակ պետք է ելնել այն հիմնարար գաղափարից, որ քննչական ստորաբաժանման ղեկավարին որոշակի լիազորությունների վերապահումը չպետք է խախտի քրեական դատավարության սուբյեկտների գործառույթների ներդաշնակ հարաբերակցությունը և չպետք է հանգեցնի դատախազի փոխարինմանը քննչական ստորաբաժանման ղեկավարով: Պետք է բացառվեն նրանց միջև մրցակցությունն ու լիազորությունների կրկնությունը: Ընդ որում, քննչական ստորաբաժանման ղեկավարին ՀՀ քրեական դատավարության ապագա օրենսգրքով վերապահվելիք լիազորությունները պետք է ունենան խիստ որոշակի շրջանակ:

4.9. Մասնավորապես, քննության գործընթացը կազմակերպելու և ապահովելու նպատակով քննչական ստորաբաժանման ղեկավարը պետք է իրավունք ունենա ա) քննիչին հանձնարարել նախաքննություն կատարումը բ) միևնույն ստորաբաժանման շրջանակներում վարույթը մի քննիչից հանձնել մյուսին. գ) վարույթից հեռացված քննիչին փոխարինել այլ քննիչով. դ) ինչպես սեփական նախաձեռնությամբ, այնպես էլ դատախազի հանձնարարությամբ ձևավորել քննչական խումբ. ե) հետևել քննիչի կողմից դատախազի հանձնարարությունների և քննչականի հանձնարարությունների կատարմանը, քրեական հետապնդման և կալանքի տակ

պահելու ժամկետների պահպանմանը. գ) գործն ընդունել իր վարույթ և անձամբ կատարել նախաքննություն. է) քննիչին տալ իր գործառույթից բխող հանձնարարություններ:

4.10. Դրա հետ մեկտեղ քննչական ստորաբաժանման ղեկավարը չպետք է քննիչին հանձնարարված վարույթի շրջանակներում ընդունի որոշումներ կամ կատարի քննչական կամ այլ դատավարական գործողություններ, վերացնի քննիչի որոշումները կամ նրան տա քննության ընթացքը կանխորոշող հանձնարարություններ:

5. Տարբերակված դատավարական ձևին վերաբերող դրույթներ

5.1. Քրեական վարույթն իրականացվում է տարբերակված ձևով: Տարբերակված վարույթը կիրառելի է ինչպես մինչդատական փուլում, այնպես էլ դատարանում:

Պարզեցված նախաքննություն

5.2. Այս վարույթի առանձնահատկությունն այն է, որ հաշվի առնելով քննվող հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը, սահմանափակվում է ապացուցման առարկան, ապացուցողական գործունեության հիմնական ծանրությունն ընկնում է դատական քննության փուլի վրա, նախաքննության բովանդակությունը կազմող գործողությունները կատարվում են սեղմ ժամկետներում, իսկ քննություն իրականացնող սուբյեկտի և դատախազի դատավարական փոխհարաբերություններն առավելագույնս պարզեցվում են:

5.3. Պարզեցված նախաքննության դեպքում ապացուցման առարկան նեղացվում է: Այն ներառում է միայն հանցակազմի հատկանիշները և անձի առնչությունը հանցագործությանը: Ապացուցման առարկան կազմող մյուս հանգամանքները հաստատվում են դատարանում:

5.4. Ոչ մեծ ծանրության հանցագործության վերաբերյալ վարույթի քննությունը պետք է ավարտվի անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու պահից մեկ ամսվա ընթացքում: Անհրաժեշտության դեպքում այդ ժամկետը կարող է երկարացվել ևս մեկ ամսով: Միջին ծանրության հանցագործության վերաբերյալ վարույթի քննությունը պետք է ավարտվի անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու պահից երկու ամսվա ընթացքում: Անհրաժեշտության դեպքում այդ ժամկետը կարող է երկարացվել ևս մեկ ամսով:

5.5. Պարզեցված կարգով նախաքննություն կատարող քննիչը իրավասու է բողոքարկել հսկող դատախազի սահմանափակ շրջանակով հանձնարարությունները կամ որոշումները, որոնց բողոքարկումը չի կասեցնում դրանց կատարումը: Քննիչն իրավունք ունի կատարել բոլոր անհրաժեշտ քննչական գործողությունները, օրենքով սահմանված կարգով կիրառել դատավարական հարկադրանքի միջոցներ, սակայն դատարանի թույլտվությամբ կատարվող քննչական գործողությունների և դատավարական հարկադրանքի միջոցների վերաբերյալ միջնորդություններ նա կարող է դատարան ներկայացնել միայն դատախազի համաձայնությամբ:

5.6. Պարզեցված նախաքննությունն ավարտվում է մեղադրական ակտի կայացմամբ, որի վավերապայմանները սահմանվում են օրենքով: Դատախազը հաստատում է մեղադրական ակտը կամ այն վերադարձնում է քննիչին՝ քննությունը շարունակելու հանձնարարությամբ:

5.7. Ելնելով վարույթի բնույթից, նշանակությունից, դատավարության մասնակիցների իրավունքների և շահերի պաշտպանության անհրաժեշտությունից, ինչպես նաև բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ապահովելու նպատակով դատախազի որոշմամբ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության վերաբերյալ ցանկացած վարույթ կարող է քննվել ընդհանուր նախաքննության կարգով:

Վարույթը մասնավոր մեղադրանքի գործերով

5.7. Մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի առանձնացումը ևս նպատակ է հետապնդում գործի քննության ծանրությունը տեղափոխել դատարան: Այս գործերով մինչդատական վարույթը, որպես այդպիսին, բացակայում է: Տուժողի բողոքը անմիջականորեն հասցեագրվում է դատարանին, որն էլ կողմերի ներկայացրած և հետագայում դատարանի կողմից ձեռք բերված նյութերի հիման վրա ամբողջ ծավալով քննում և լուծում է գործը: Վարույթի այս տեսակը ևս կարող է տարբերակում ունենալ, օրինակ՝ երբ մեղադրյալն ընդունում է տուժողի կողմից իրեն վերագրվող արարքը:

5.8. Նախագծում պետք է հստակ սահմանել մասնավոր մեղադրանքի կարգով քննվող հանցագործությունների շրջանակը: Այս կարգով կարող են քննվել միայն ոչ մեծ ծանրության հանցագործությունները: Պետք է նկատի ունենալ նաև կատարված հանցագործությամբ ներկայացված «քրեական հայցը» պաշտպանելու տուժողի ունակությունն ու հնարավորությունները:

Համաձայնեցման վարույթ

5.9. Համաձայնեցման վարույթի նպատակը մեղադրյալի մեղքի վերաբերյալ վեճի բացակայության դեպքում վարույթի արագացված քննություն կատարելն է: Համաձայնեցման վարույթը կարող է կիրառվել միայն դատական քննության ընթացքում: Այս դեպքում կարևորվում է ոչ թե հանցագործության փաստը, այլ անձի մեղավորության հարցը, դատավճռում արտացոլվում են ոչ թե գործի փաստական հանգամանքները, այլ գործով կողմերի դիրքորոշումը: Համաձայնության վարույթի դեպքում ապացույցների հետազոտում չի իրականացվում, թեև դատարանն ուսումնասիրում է որոշակի փաստական հանգամանքներ և կարող է բացատրություններ պահանջել մեղադրյալից ու տուժողից:

5.10. Համաձայնեցման վարույթում հանրայնության սկզբունքը փոխարինվում է դիսպոզիտիվությամբ, իսկ օրինականությունը՝ նպատակահարմարությամբ: Սակայն եթե մասնավոր մեղադրանքի գործերով կողմերի համաձայնությունը պարտադիր է դատարանի համար, ապա հանրային մեղադրանքով՝ ոչ:

5.11. Համաձայնեցման վարույթը կարող է կիրառվել միայն ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների վերաբերյալ գործերով: Վարույթի այս

տեսակի կիրառման միակ հիմքը նախնական դատական լսումների փուլում մեղադրյալի ներկայացրած համապատասխան միջնորդությունն է:

5.12. Համաձայնեցման վարույթ կիրառելու համար անհրաժեշտ են նաև որոշակի պայմաններ, մասնավորապես, դատավարության մյուս մասնակիցների՝ դատախազի, տուժողի, այլ մեղադրյալների համաձայնությունը:

5.13. Համաձայնեցման վարույթ կիրառելու հարցում դատարանն օժտված է հայեցողությամբ: Դատարանը մերժում է համաձայնեցման վարույթ կիրառելու միջնորդությունը, եթե չեն պահպանվել օրենքի որոշակի ձևական պահանջներ (որակման անհամապատասխանությունը մեղադրանքի փաստական նկարագրությանը, մեղադրյալի պաշտպան չունենալը և այլն):

5.14. Դատարանը տուժողի նախաձեռնությամբ կարող է մերժել համաձայնեցման վարույթ կիրառելու միջնորդությունը, եթե Ա/ առերևույթ հիմնավորվում է, որ հանցագործությամբ պատճառված վնասը հատուցված չէ, Բ/ առերևույթ հիմնավորվում է, որ փաստացի կատարված հանցանքը ավելի ծանր է, Գ/ առերևույթ հիմնավորվում է, որ հանցանքը կատարել է ոչ թե մեղադրյալը, այլ մեկ ուրիշ անձ:

6. Ապացույցներ և ապացուցում

6.1. Հայեցակարգային առաջարկությունները վերաբերում են ինչպես ապացույցների տեսակներին, այնպես էլ՝ ապացուցման գործընթացին:

6.2. Առաջարկվում է հստակեցնել և կատարելագործել ապացույցների շրջանակը՝ սահմանելով կոնկրետ ապացույցի ձևավորման եղանակը:

6.3. Հասարակության զարգացումն ինքնին ենթադրում է նաև քրեադատավարական գործունեության զարգացում և վերափոխում, որն էլ պայմանավորում է քրեական դատավարության առանձին ինստիտուտների, այդ թվում՝ նաև ապացուցման աղբյուրների զարգացման անհրաժեշտությունը: Սակայն, ինչպես ապացուցման նոր աղբյուրի նախատեսումը, այնպես էլ արդեն իսկ սահմանված ցանկից այս կամ այն աղբյուրի դուրս բերումը չի կարող ինքնանպատակ լինել: Այն պետք է բխի պրակտիկայի պահանջներից և ունենա իր գիտական հիմնավորումը:

6.4. Այս առումով անհրաժեշտ է կանոնակարգել տվյալ գործի մեղադրանքի հետ առնչվող մեկ այլ քրեական վարույթով մեղադրյալի ցուցմունքների ստացման դատավարական կարգը:

6.5. Ապացույցի այս տեսակը կարող է ձևավորվել միայն մեկ այլ քրեական վարույթով անցնող մեղադրյալի անմիջական հարցաքննության արդյունքում, ինչը պետք է բացառի նրա հարցաքննության արձանագրության մեխանիկական տեխափոխումը մեկ քրեական վարույթից մյուսը:

6.6. Արդարադատության շահի գերակա գաղափարը ենթադրում է դատավարության բոլոր մասնակիցների կողմից հարգալից վերաբերմունք արդարադատության նկատմամբ, ինչի անբաժան մասն են կազմում ոչ միայն դատավարական պարտականությունների պատշաճ կատարումը, այլև սուբյեկտիվ իրավունքներից բարեխիղճ օգտվելը և դրանք չարաշահելու անթույլատրելիությունը:

6.7. Այս համատեքստում Նախագիծը պետք է ձերբազատվի մեղադրյալի սուտ ցուցմունք տալու իրավունքից կամ սուտ ցուցմունքի համար պատասխանատվության անձեռնմխելիությունից: Նախ և առաջ, դատավարության որևէ սուբյեկտ չպետք է վարույթն իրականացնող մարմնին, հատկապես, դատարանին իրականությանն ակնհայտորեն չհամապատասխանող տեղեկություն տրամադրելու արտոնություն ունենա: Բացի այդ, մեղադրյալին նման իրավունքի վերապահումը բացասաբար է անդրադառնում հենց նրա տված ցուցմունքի ապացուցողական նշանակության վրա, քանի որ գնահատող սուբյեկտն այն դիտարկում է անվստահության և անարժանահավատության նախապաշարումի պրիզմայով: Հետևաբար, մեղադրյալը պետք է իրավունք ունենա կամ պահպանել լրություն կամ տալ ճշմարիտ ցուցմունքներ:

Մեղադրյալի հարցաքննությունը պետք է կատարվի միմիայն մեղադրյալի նախաձեռնությամբ և դատավարության որիևցե սուբյեկտ ոչ մինչդատական վարույթում, ոչ դատական քննության ընթացքում չպետք է իրավունք ունենա հարցաքննել մեղադրյալին, մինչև անձամբ մեղադրյալի կողմից ցուցմունք տալու վերաբերյալ ցանկություն դրսևորելը: Ապագա քրեական դատավարության օրենսգրքում անհրաժեշտ է նախատեսել դրույթ առ այն, որ մեղադրյալի կողմից ցուցմունք տալու նախաձեռնություն չդրսևորելը չի կարող մեկնաբանվել ի վնաս մեղադրյալի:

Օրենսդրական նման կարգավորումը կբարձրացնի մեղադրյալի ցուցմունքների գիանատողական արժեքը: Այս իրավակարգավորման պայմաններում, միանշանակ օրինաչափ կլինի մեղադրյալին սուտ ցուցմունք տալու իրավունքից զրկելը, քանի որ ցուցմունք տալը կգտնվի մեղադրյալի ազատ հայեցողության շրջանակներում և նման ցանկություն դրսևորելու դեպքում նա պարտադրված կլինի ճիշտ ցուցմունք տալ:

6.8. Ապացույցների շրջանակը պետք է ընդլայնվի՝ ներառելով ապացույցների այնպիսի տեսակ, ինչպիսին է փորձագետի ցուցմունքը:

6.9. Թեև ՀՀ քր. դատ. օր-ը նախատեսում է փորձագետի հարցաքննության հնարավորությունը, սակայն փորձագետի հարցաքննության արձանագրությունը կհամարվի անթույլատրելի ապացույց, քանի որ ապացույցների տեսակները սահմանող ՀՀ քր. դատ. օր-ի 104 հոդվածում ապացույցի այդպիսի տեսակ նախատեսված չէ:

6.10. Փորձագետի հարցաքննության արձանագրությունը չի կարող դիտվել որպես փորձագետի եզրակացության բաղկացուցիչ մաս: Նախ՝ ՀՀ քր. դատ. օր. 114 հոդվածի համաձայն փորձագետի եզրակացությունը գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի որևէ բնագավառում հատուկ գիտելիքների օգտագործմամբ գրավոր հիմնավորված հետևություններն են իրեն առաջադրված հարցերի, ինչպես նաև իր իրավասության մեջ մտնող այն հանգամանքների վերաբերյալ, որոնց նա հանգել է գործի համապատասխան նյութերը հետազոտելով: Մինչդեռ ցուցմունքները մինչդատական վարույթում օրենքով սահմանված կարգով կատարված հարցաքննության ժամանակ գրավոր կամ բանավոր ձևով հաղորդած տվյալներն են: Բացի այդ, փորձագետի հարցաքննությունը կատարվում է վկայի հարցաքննության համար քր. դատ. օր-ով սահմանված կարգով, հարցաքննության մասին կազմվում է արձանագրություն, որի մեջ նշվում են փորձագետի ցուցմունքները և առաջադրված հարցերին նրա տված պատասխանները: Մինչդեռ փորձագետի եզրակացությունը ձևավորվում է փորձաքննության արդյունքում, որի կատարման կարգը սահմանված է ՀՀ քր. դատ. օր.-ով: Ավելին, արգելվում է փորձագետի եզրակացության փոխարինումը փորձագետի հարցաքննության արձանագրությամբ:

6.11. Փորձագետի հարցաքննության անհրաժեշտությունն իրավաբանական գրականության մեջ գրեթե չի վիճարկվում: Ավելին, նշվում է, որ պրակտիկայում այն բավականին տարածված է և հաճախ միայն փորձագետի եզրակացության հիման վրա դժվար է հետևություն անել կատարված փորձաքննության արդյունքների մասին: Ուստի փորձագետի եզրակացության պարզաբանման և ճշտման նպատակով առաջանում է փորձագետի հարցաքննության անհրաժեշտությունը:

6.12. ՀՀ քր. դատ. օր-ը որպես ապացույցի ինքուրույն տեսակ նախատեսելով փորձագետի ցուցմունքը, միաժամանակ պետք է սահմանի դրա բովանդակությունը, նպատակը, ապացույցի այդ տեսակի ստացման եղանակները: Փորձագետի ցուցմունքներն իրենցից ներկայացնում են հաղորդումներ, որի տակ հասկանում ենք վերջինիս կողմից ընկալված ինֆորմացիայի փոխանցում: Սակայն փորձագետի ցուցմունքն ունի իր առանձնահատկությունները, որոնք էլ պայմանավորում են ապացույցի այս տեսակի նախատեսման անհրաժեշտությունը: Մասնավորապես, լինելով ինֆորմացիայի փոխանցման եղանակ, փորձագետի ցուցմունքները տարբերվում են վկայի ցուցմունքներից: Եթե վերջինիս բովանդակությունը կարող են կազմել անմիջականորեն ընկալված կամ այլ կոնկրետ աղբյուրից ստացված, գործի համար նշանակություն ունեցող փաստերի մասին տեղեկությունները, ապա փորձագետը կարող է հարցաքննվել միայն իր կողմից տված եզրակացության պարզաբանման և ճշտման նպատակով և միայն այն հանգամանքների կապակցությամբ, որոնք կազմում են իր կողմից կատարված փորձաքննության առարկան: Հետևաբար փորձագետը կարող է հարցաքննվել միայն իր կողմից եզրակացություն տալուց և քննիչի կողմից այն մանրամասն վերլուծելուց հետո:

6.13. Վերը նշված առանձնահատկությունները հնարավորություն են տալիս փորձագետի ցուցմունքները սահմազատել այլ ապացույցներից և տալ դրա հետևյալ օրենսդրական ձևակերպումը՝ «Փորձագետի ցուցմունքը մինչդատական վարույթում, ինչպես նաև դատարանում օրենքով սահմանված կարգով կատարված հարցաքննության ժամանակ իր տված եզրակացության պարզաբանման և ճշտման նպատակով գրավոր կամ բանավոր ձևով նրա հաղորդած տվյալներն են»:

6.14. ՕՀԳ տվյալներն ապացուցման գործընթացում կարող են կիրառվել այնքանով, որքանով համապատասխանում են ապացույցների հավաքմանը, ստուգմանը և գնահատմանը ներկայացվող պահանջներին:

6.15. Օպերատիվ-հետախուզական ճանապարհով ստացված նյութերը որպես ապացույց թույլատրվում են, եթե. 1) դրանք ստացվել են օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացումը կարգավորող օրենսդրությանը համապատասխան, 2) օրենքով սահմանված կարգով կատարված դատավարական գործողությունների ճանապարհով այդ տվյալները փոխարկվել են քրեադատավարական ապացույցների:

6.16. Քանի որ օպերատիվ-հետախուզական գործունեությունը կարող է մարդու իրավունքների և ազատությունների խախտման պատճառ լինել, օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների հիման վրա ձևավորված ապացույցները ենթակա են բազմակողմանի և խորը ստուգման, նախ և առաջ՝ թույլատրելիության տեսանկյունից: Նշված ապացույցների թույլատրելիության հարցի լուծման համար կարևոր է որոշել դրանց հիքում ընկած օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների ստացման օրինականությունը:

6.17. Ինքնուրույն ապացուցողական նշանակություն կարող են ունենալ դատարանի որոշմամբ կատարվող օպերատիվ-հետախուզական գործողությունների արդյունքները: Այդ գործողությունների ցանկը պետք է սահմանվի քրեական դատավարության օրենսգրքով: Սակայն այս ճանապարհով ստացված նյութերը ևս ենթակա են ստուգման թույլատրելիության տեսանկյունից՝ հիմնական շեշտադրումը դնելով համապատասխան օպերատիվ-հետախուզական միջոցառման կատարման և արդյունքների ամրագրման օրինականության վրա:

6.18. Անհրաժեշտ է նախատեսել մինչդատական վարույթում պաշտպանության կողմի՝ որպես ապացույց առարկաներ և փաստաթղթեր ներկայացնելու իրավունքը: Վարույթ իրականացնող մարմինը պետք է ներկայացված ապացույցը կցի քրեական գործի նյութերին, սակայն իրավունք ունի գրավոր եզրակացություն կազմել ներկայացված ապացույցի թույլատրելիության և վերաբերելիության մասին:

6.19. Սրանով ընդլայնվում են մինչդատական վարույթում մրցակցության տարրերը՝ պաշտպանության կողմին իրավունք վերապահելով որպես ապացույց

ներկայացնել առարկաներ և փաստաթղթեր, դատավարության մնացած մասնակիցներին էլ հնարավորություն է ընձեռվում մինչև գործը դատարան ուղարկելը ծանոթանալ նաև այդ ապացույցին, դրա վերաբերյալ հայտնել իրենց դիրքորոշումը:

6.20. Ապացույցների թույլատրելիության կանոնները պետք է խստացվեն, և հստակ նախատեսվեն քրեական դատավարության օրենսգրքով:

6.21. Անթույլատրելի պետք է համարվեն մեղադրյալի այն ցուցմունքները, որոնք պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքում տրվել են նրա բացակայությամբ և եթե մեղադրյալը դրանք չի հաստատում դատարանում:

6.22. Պետք է նախատեսվի, որ օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների հիման վրա կատարված քննչական գործողությունների արդյունքները նույնպես անթույլատրելի են:

6.23. Անհրաժեշտ է նախատեսել ցուցմունքը դեպոնացնելու, մասնավորապես՝ մինչդատական վարույթի ընթացքում դատավորի ներկայությամբ անձին հարցաքննելու հնարավորություն: Նման հարցաքննությունը կարող է կատարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում, երբ որոշակի հանգամանքների բերումով հետազայում անձի հարցաքննությունը դատարանում կարող է դժվարանալ կամ անհնարին լինել: Նման նախաձեռնությամբ կարող են հանդես գալ ինչպես քննիչը, այնպես էլ տուժողը և պաշտպանության կողմը:

6.24. Անհրաժեշտ է նախատեսել ձերբակալում կամ կալանավորում իրականացրած ոստիկանի հարցաքննության հնարավորություն: Եթե դատաքննության ընթացքում քննչական կամ այլ դատավարական գործողությունների արձանագրությունների հետազոտման արդյունքում պաշտպանության կողմը վիճարկում է համապատասխան արձանագրությունը, ապա պետք է իրավունք ունենա դատարանում հարցեր տալու քննչական գործողությունը կատարած պաշտոնատար անձին:

6.25. Նման կարգավորումը պարագայում.

ա) կբարձրանա մինչդատական վարույթում քննչական գործողություն կատարող պաշտոնատար անձի պատասխանատվության զգացումը,

բ) դատարանում կբարձրանա քննչական գործողության արձանագրության հետազոտման նշանակությունը:

գ) հնարավոր կլինի ապահովել քննչական գործողության բազմակողմանի հետազոտումը, բացահայտել անհստակությունները, վեր հանել դրա հավաստիության վերաբերյալ կասկածները և ապահովել ապացույցի այդ տեսակի արդյունավետ ստուգումն ու օբյեկտիվ գնահատումը:

7. Նախնական դատական լուումները քրեական դատավարությունում

7.1. ՀՀ քրեական դատավարության ապագա օրենսգրքում անհրաժեշտ է սահմանել նախնական դատական լուումների ձևով քրեական դատավարության առանձին փուլ, որը պարտադիր կլինի բոլոր քրեական գործերով:

7.2. Նախնական դատական լուումների ընթացքում քննարկման ենթակա են այն հարցերը, որոնց լուծումը քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված է քրեական դատավարության այս փուլի ընթացքում:

7.3. Մասնավորապես, խոսքը վերաբերում է այնպիսի հարցերի, ինչպիսիք են՝

1. գործն ըստ ընդդատության ուղարկելը.
2. ինքնաբացարկի և բացարկների լուծումը.
3. գործը մեղադրողին վերադարձնելը.
4. քրեական վարույթը կասեցնելը.

5. քրեական վարույթը կարճելը և (կամ) քրեական հետապնդումը դադարեցնելը.
6. խափանման միջոց ընտրելը, փոփոխելը կամ վերացնելը.
7. քաղաքացիական հայցվոր և պատասխանող ճանաչելու հարցը.
8. ապացույցի թույլատրելիության հարցը լուծելը.
9. նոր ապացույցներ ձեռք բերելու վերաբերյալ միջնորդությունները քննարկելը.
10. համաձայնեցման վարույթ կիրառելը:

7.4. Ընդ որում, նախնական դատական լսումների փուլում 1-6-րդ կետերով նախատեսված հարցերը քննարկվում են ինչպես դատարանի նախաձեռնությամբ, այնպես էլ դատավարության մասնակիցների միջնորդությամբ, 7-9-րդ կետով նախատեսված հարցը՝ միայն դատավարության մասնակցի միջնորդությամբ, իսկ 10-րդ կետով նախատեսված համաձայնեցման վարույթի կիրառման հարցը՝ միայն մեղադրյալի միջնորդությամբ:

7.5. Ապացույցի թույլատրելիության հարցի լուծման հիմքով նախնական լսումների անցկացումը նպատակ է հետապնդում անհրաժեշտ պայմաններ ապահովել արդարադատության արդյունավետ իրականացման համար՝ մրցակցության սկզբունքի տարրերի ներմուծման պայմաններում, ազատել դատական քննությունը հնարավոր քաշքշուկներից:

7.6. Նախնական լսումների ընթացքում ապացույցների ըստ էության հետազոտում տեղի չի ունենում (օրինակ՝ բացակայում է բնակարանի խուզարկություն կատարելու թույլտվություն տալու մասին դատարանի որոշումը, քննչական գործողությունը կատարվել է առանց ընթերակայի մասնակցության): Եթե ապացույցի թույլատրելիության վիճարկումը պահանջում է տվյալ կամ մեկ այլ ապացույցի հետազոտում, միջնորդության քննությունը հետաձգվում է՝ մինչև դատական նիստում գործը քննելը: Միաժամանակ օրենսդրորեն պետք է սահմանվի, որ եթե դատական քննության ընթացքում որևէ ապացույցի հետազոտման ժամանակ դատավարության մասնակցի

կողմից միջնորդություն է ներկայացվում այդ ապացույցը անթույլատրելի ճանաչելու մասին, Դատարանը չպետք է իրավունք ունենա հետաձգելու այդ միջնորդության քննությունը և այդ ապացույցը թույլատրելի կամ անթույլատրելի ճանաչել միայն դատավճռով, այլ պարտավոր է անմիջապես քննարկել և լուծել բարձրացված հարցը: Գործում առկա ապացույցների թույլատրելիության հարցը ցանկացած դեպքում պետք է լուծվի մինչև դատական վիճաբանությունների անցնելը:

7.7. Նախնական լուսմաների ընթացքում գործը մեղադրողին վերադարձնելու հարցը կարող է առաջանալ, երբ մեղադրական եզրակացությունը կազմված է քր. դատ. օր. պահանջների խախտումներով (օրինակ՝ այն ստորագրված չէ քննիչի կողմից, չունի նկարագրական-պատճառաբանական մաս, օրենքով սահմանված անհրաժեշտ հավելվածներ): Քննարկվող հարցն իր կարգավորումն է գտել նաև Էստոնիայի քր. դատ. օր. 258 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում:

7.8. Քրեական վարույթը կասեցնելու հարցը լուծելու համար նախնական լուսմաներ անցկացվում են այն դեպքերում, երբ մեղադրյալը թաքնվել է քննությունից և նրա գտնվելու վայրը հայտնի չէ կամ մեղադրյալի մոտ առկա է ծանր հիվանդություն, որը համապատասխան բժշկական եզրակացության հիման վրա բացառում է նրա մասնակցությունը հետագա վարույթին:

7.9. Դատարանի նախաձեռնությամբ կամ դատավարության մասնակիցների միջնորդությամբ նախնական լուսմաներ կարող են անցկացվել նաև քրեական վարույթը կարճելու և (կամ) քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը լուծելու համար, եթե առկա են քր. դատ. օր-ով սահմանված հիմքեր: Խոսքը, սակայն, չպետք է վերաբերի այնպիսի հիմքերի, որոնց լուծումն առանց դատական քննության ընթացքում ապացույցների ըստ էության հետազոտության հնարավոր չէ (օրինակ՝ երբ վիճարկվում է հանցակազմի առկայությունը արարքի մեջ կամ մեղադրյալի առնչությունը արարքին):

7.10. Խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու հարցը նույնպես ենթակա է լուծման նախնական լուսմաների ընթացքում: Նշենք, որ խնդրին նման լուծում է տրված նաև Էստոնիայի քր. դատ. օր. 258 հոդվածի 1-ին մասի 1-ին կետում, Վրաստանի քր. դատ. օր. 210 հոդվածի 4-րդ մասի «b» կետում:

7.11. Մեղադրյալի միջնորդությամբ նախնական լուսմների ընթացքում ենթակա է լուծման նաև համաձայնեցման վարույթ կիրառելու հարցը:

7.12. Նախնական լուսմների պարտադիր մասնակիցներ են դատավորը, դատախազը, մեղադրյալը և նրա պաշտպանը, ինչն ապահովում է մրցակցության սկզբունքի իրացումը քրեական դատավարության այս փուլում: Դատավարության մյուս մասնակիցները (տուժող, քաղաքացիական հայցվոր, քաղաքացիական պատասխանող և այլն) նույնպես պատշաճ կարգով ծանուցվում են նախնական լուսմների անցկացման տեղի և ժամանակի մասին:

7.13. Նախնական լուսմներն անցկացվում են դռնբաց դատական նիստում, որն արձանագրվում է դատական նիստի քարտուղարի կողմից և ձայնագրառվում:

7.14. Նախնական լուսմների արդյունքներով կայացվում են հետևյալ որոշումները՝

1. գործն ըստ ընդդատության ուղարկելու մասին.
2. ինքնաբացարկի մասին.
3. դատական նիստ նշանակելու մասին, եթե բացակայում են քրեական վարույթը կասեցնելու, կարճելու և (կամ) քրեական հետապնդումը դադարեցնելու կամ գործը մեղադրողին վերադարձնելու հիմքերը.
4. գործը մեղադրողին վերադարձնելու մասին.
5. քրեական վարույթը կասեցնելու մասին.
6. քրեական վարույթը կարճելու և (կամ) քրեական հետապնդումը դադարեցնելու մասին:

7.15. Այն դեպքում, երբ նախնական դատական լուսմների ընթացքում միայն քննարկվում են խափանման միջոց կիրառելու, փոփոխելու կամ վերացնելու, ապացույցի թույլատրելիության, քաղաքացիական հայցվոր ճանաչելու, համաձայնեցման վարույթ կիրառելու հարցերը, ինչպես նաև նոր ապացույցներ ձեռք բերելու

վերաբերյալ միջնորդությունները, ապա ավարտին կայացվում է որոշում դատական նիստ նշանակելու մասին:

7.16. Նախնական լուսմների արդյունքում կարող է որոշում կայացվել խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու մասին: Այս կերպ է հարցը լուծված նաև էստոնիայի քր. դատ. օր. 262 հոդ. 1-ին մասի 4-րդ կետում:

7.17. Հարկ է նշել նաև, որ նախնական լուսմների ընթացքում լուծման ենթակա հարցերն արդեն նշանակված դատական նիստում կարող են բարձրացվել միայն այն դեպքում, երբ այդպիսիք պայմանավորված են նոր հիմքերի ի հայտ գալով: Դրա նպատակն է բեռնաթափել դատական քննությունը, խուսափել հնարավոր քաջքշուկներից, ապահովել խնայողության սկզբունքի իրացումը դատական քննության ընթացքում:

7.18. Այսպիսով, շարադրվածի հիման վրա կարող ենք արձանագրել, որ նախնական դատական լուսմները քրեական դատավարության առանձին փուլ են և, իբրև ամբողջական միավոր, առանձնանում են բովանդակային միասնականությամբ: Դա արտահայտվում է քրեական վարույթի քննարկվող մասը կարգավորող իրավական նորմերում՝ ով է անցկացնում նախնական դատական լուսմներ, ովքեր են հրավիրվում նախնական դատական նիստին, իրավունքների և պարտականությունների ինչպիսի շրջանակ ունեն նախնական լուսմների մասնակիցները, ինչպիսի հարցեր են լուծվում և ինչ հերթականությամբ: Նախնական լուսմները կարգավորող իրավական նորմերի միասնականությունն արտահայտվում է դրանց կառուցակարգում քրեական դատավարության սկզբունքների կիրառման մեջ: Մասնավորապես, նախնական լուսմների ընթացքում իրացվում են այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են օրինականությունը, արդարադատության իրականացումը միայն դատարանի կողմից, հրապարակայնությունը, մրցակցությունը, կողմերի հավասարությունը և այլն: Նախնական լուսմները կարգավորող իրավական նորմերի միասնականությունը դրսևորվում է նաև օգտագործվող իրավական հասկացությունների ամբողջությամբ՝ դատավարության մասնակիցներ (դատավոր, պաշտպան, տուժող և այլն), ապացույցների թույլատրելիություն և այլն:

7.19. Իրավական տեխնիկայի տեսանկյունից նախնական դատական լուծումները կարգավորող նորմերը պետք է ունենան որոշակի առանձնացվածություն: Այսինքն՝ ՀՀ քր. դատ. օր-ում քրեական վարույթի հիշյալ փուլին պետք է նվիրվի առանձին գլուխ, ինչը, ապահովելով նախնական դատական լուծումների որակական առանձնացվածությունը, կվկայի քրեադատավարական օրենքի տրամաբանական հետևողականության մասին:

8. ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

8.1. Դատական քննությունը քրեադատավարական ընթացակարգի հիմնական և կենտրոնական փուլն է: Դրա ընթացքում պետք է հստակ լուծում ստանա քրեական վարույթի ամենահիմնական՝ մեղադրյալի անմեղության կամ մեղավորության հարցը:

8.2. Դատական քննության նպատակը հանրային մեղադրանքի վարույթներով պետության և մեղադրյալի, իսկ մասնավոր մեղադրանքի դեպքում՝ տուժողի և մեղադրյալի միջև առկա իրավական վիճի լուծումն է, ինչը նշանակում է քրեական գործերով դատարանի կողմից սահմանադրությամբ իրեն վերապահված արդարադատություն իրականացնելու բացառիկ իրավասության կիրառում: Այսինքն՝ դատական քննությունը քրեական արդարադատության իրականացման յուրահատուկ դատավարական ձև է:

8.3. Դատական քննության և ընդհանրապես դատական վարույթների գլխավոր գործող անձը դատարանն է: Որպես դատական իշխանության անկախ մարմին, քրեական արդարադատություն իրականացնելիս դատարանն օրենքով պաշտպանված է կողմերի ցանկացած ներգործությունից կամ ուղղորդումից: Որպես քրեական վարույթն իրականացնող մարմին դատարանն օժտված է դատական նիստի ընթացքը կանխորոշող որոշումներ ընդունելու և այն կառավարելու մենաշնորհով: Դատարանի կարգավիճակից, դերից և լիազորությունների շրջանակից է կախված, թե տվյալ փուլում որքան հաջող կլուծվեն քրեական դատավարության և, մասնավորապես, դատական քննության խնդիրները:

Մրցակցությունը

8.4. Արդար դատաքննության իրավունքի ապահովման անկյունաքարը մրցակցային դատավարությունն է: Այն կարող է երաշխավորվել երեք բաղադրատարրերի միաժամանակյա պահպանման դեպքում.

Ա) անկախ և անկողմնակալ դատարանի առկայություն,

Բ) կողմերի միջև մեղադրանքի և պաշտպանության գործառույթների տարանջատում և դրանց սահմանազատում գործի լուծման գործառույթից,

Գ) կողմերի դատավարական իրավահավասարություն՝ սեփական դիրքորոշումը հիմնավորելու և մյուս կողմի փաստարկները հերքելու համար:

8.5. Դատարանի անկողմնակալությունն առաջին հերթին պետք է արտահայտվի նրա պասսիվության մեջ: Դատարանն օբյեկտիվ ճշմարտության բացահայտման խնդիր չպետք է ունենա, այլ պետք է դատական ճշմարտությունը պարզելու նպատակով կողմերի համար հավասար պայմաններ ապահովի: Այս առումով դատարանը սեփական նախաձեռնությամբ նոր ապացույցներ հավաքելու (վկաներ հրավիրելու, փորձաքննություններ նշանակելու, փաստաթղթեր պահանջելու և այլն) իր լիազորությունը կարող է իրացնել միայն այն ժամանակ, երբ դատաքննության ընթացքում հետազոտվել են բոլոր ապացույցները և կողմերը նոր ապացույցներ ձեռք բերելու միջնորդություններ չեն ներկայացրել և այն պայմանով, որ հետազոտված ապացույցները դատարանին օբյեկտիվորեն հնարավորություն չեն տալիս կայացնել հիմնավորված, պատճառաբանված և արդարացի դատական ակտ: Սակայն օրենսդրորեն պետք է սահմանվի պարտադիր նորմ առ այն, որ դատարանի պետք է իրավունք ունենա դատական քննության ընթացքում նշանակել որևէ փորձաքննություն, կանչել վկա, պահանջել ապացույց, եթե հիմնավոր կասկած ունի, որ դատական քննության վերջում այդ ապացույցը կարող է վնասվել, կորցնել իր ապացուցողական նշանակությունը կամ այլն:

8.6. Կողմերի իրավահավասարության հիմնական գրավականը ապացույցներ ներկայացնելու և դրանց հետազոտմանը մասնակցելու համար հավասար հնարավորությունների ապահովումն է: Դա, մասնավորապես, ենթադրում է

մեղադրանքի և պաշտպանության կողմերի համար դատական քննության ընթացքում հետազոտվելիք ապացույցների ներկայացման նույնանման ռեժիմի սահմանում: Այսինքն՝ հետազոտման համար պաշտպանության կողմի ներկայացրած ապացույցները պետք է ընդունվեն նույն սկզբունքով, ինչ-որ մինչդատական վարույթում մեղադրանքի ձեռք բերած ապացույցները: Մինչդեռ գործող օրենսդրությամբ նախաքննության ընթացքում հավաքված փաստական տվյալներն անվերապահորեն ընդունվում են որպես ապացույց, իսկ պաշտպանության կողմի ներկայացրած նյութերը կարող են կցվել գործին դատական քննության մասնակիցների, այդ թվում՝ մեղադրողի կարծիքը լսելուց հետո: Բացի այդ, ներկայումս քրեական գործը դատարանի կողմից քննելիս դատախազը լիազորված է ներկայացնել ապացույցներ, ինչպես նաև հետաքննության մարմնին նրա համար պարտադիր հանձնարարություններ տալ ապահովելու դատարանին ապացույցներ ներկայացնելը, այնինչ պաշտպանը կամ ամբաստանյալը քրեական գործին կցելու և հետազոտելու համար կարող են միայն նյութեր ներկայացնել:

8.7. Դատական ապացույցման ընթացքում մրցակցության ապահովումն առաջին հերթին կապված է ապացույցների հետազոտման անմիջականության հետ: Այս գործընթացի օրենսդրական կարգավորումը առավելագույնս պետք է միտված լինի ապացույցը ձեռք բերած կամ ձևավորած անձին դատարանում լսելու, նրան հարցեր տալու հնարավորությունների ստեղծմանը, այլ ոչ թե արդեն պատրաստված փաստաթղթի ընթերցմանը: Այս համատեքստում պարտադիր է դառնում ցանկացած եզրակացություն տված փորձագետի հարցաքննությունը դատարանում, ինչպես նաև այն հետքաննիչի կամ քննիչը հարցաքննությունը, որի կատարած քննչական կամ այլ դատավարական գործողության արդյունքում ձեռք բերված ապացույցի թույլատրելիությունը վիճարկվում է:

8.8. Կողմերի իրավահավասարության ապահովմանը պետք է նպաստի նաև պաշտպանության կողմին բացման խոսքի կամ սկզբնական ելույթի իրավունք վերապահելը, որի միջոցով վերջինս, ի պատասխան մեղադրական եզրակացության եզրափակիչ մասի հրապարակման, հնարավորություն կստանա դատարանին, դատական քննության մասնակիցներին և դատական նիստին ներկա գտնվող անձանց (հանրությանը) իր դիրքորոշումը հայտնել մեղադրյալին առաջադրված

մեղադրանքի վերաբերյալ, ինչպես նաև հրապարակայնորեն ներկայացնել գործի փաստական հանգամանքների սեփական վարկածը:

8.9. Նորամուծությունների այս համալիրը իրական հնարավորություն կընձեռի որակապես նոր աստիճանի բարձրացնել դատական քննության ընթացքում մրցակցության ապահովման գաղափարը և դատարանին ձերբազատել անորոշությունների կամ ենթադրությունների ոգով դատական ակտեր կայացնելուց:

Մեղադրանքի փոփոխումը դատարանում

8.10. Թեև մինչդատական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները և կայացված որոշումները դատարանի համար ունեն նախնական և օժանդակ նշանակություն, այդուհանդերձ, մինչդատական վարույթի արդյունքները կանխորոշում են դատական քննության սահմանները, այսինքն՝ գործի քննությունը դատարանում կատարվում է միայն մեղադրյալի նկատմամբ և միայն այն մեղադրանքի սահմաններում, որով նրան մեղադրանք է առաջադրվել:

8.11. Դրա հետ մեկտեղ չեն բացառվում այն իրավիճակները, երբ դատական քննության ընթացքում ապացույցների հետազոտման արդյունքում պարզվում են այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում և որոնք գործում առկա այլ փաստական հանգամանքների հետ օբյեկտիվորեն պահանջում են մեղադրանքի փոփոխում (խստացման կամ մեղմացման առումով) կամ լրացում:

8.12. Այս օբյեկտիվ անհրաժեշտությունը հաշվի առնելով Նախագիծը սկզբունքորեն ընդունում է դատարանում մեղադրողի կողմից մեղադրական եզրակացության մեջ ամրագրված մեղադրանքի փոփոխման հնարավորությունը, սակայն ոչ այն կարգավորմամբ, որն առկա է գործող օրենսգրքի 309.1 հոդվածում:

8.13. Նախ և առաջ, մեղադրողի կողմից մեղադրանքի փոփոխումը չպետք է կապված լինի լրացուցիչ կամ նոր քննչական կամ այլ դատավարական գործողություններ կատարելու հետ: Մեղադրանքի փոփոխումը ոչ թե պետք է հիմք

կամ պատճառ հանդիսանա նոր քննչական կամ այլ դատավարական գործողություններ կատարելու համար (ինչն ինքնին նշանակում է լրացուցիչ նախաքննության ինստիտուտի վերականգնում (ռեստավրացիա) կամ դրա քողարկում այլ անվան տակ), այլ պետք է դատարանում հետազոտված և գործում առկա այլ ապացույցների համալիր վերլուծության արդյունք, հետևանք լինի:

8.14. Եթե նույնիսկ որոշակի բացառիկ դեպքերում մեղադրանքի փոփոխությունը պահանջի նոր ապացույցների ձեռք բերում, ապա դրա համար մեղադրողի միջնորդությամբ, դատավարության բոլոր մասնակիցների կարծիքները լսելուց հետո և դատարանի որոշմամբ կարող են օգտագործվել բացառապես գործի դատական քննության ընթացքում հասանելի դատավարական միջոցները (նոր վկաներ կանչելը, փորձաքննություններ նշանակելը, առարկաներ կամ փաստաթղթեր պահանջելը, տեղանքի կամ շենքի զննումը, ճանաչման ներկայացնելը, քննչական փորձարարությունը, հետազոտման համար նմուշներ ստանալը, առարկաների կամ փաստաթղթերի զննումը, քննումը): Այսինքն՝ մեղադրանքի փոփոխությանը նախորդող գործընթացը պետք է լինի թափանցիկ և դուրս չգա դատարանի վերահսկողության տիրույթից: Հակառակ կարգավորումը կնսեմացնի դատական քննության փուլում դատարանի կարգավիճակը և դերը, ինչպես նաև նրան կախյալ կդարձնի մեղադրանքի կողմի դիրքորոշումից:

8.15. Այսպիսով, դատական քննության ընթացքում պարզված նոր փաստական հանգամանքների հիման վրա, սակայն մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը, մեղադրողը կարող է դատարանից ժամանակ խնդրել (դատական նիստը հետաձգելու տեսքով) առաջադրված մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու համար: Պաշտպանության կողմին համապատասխանաբար ժամանակ է տրամադրվում փոփոխված մեղադրանքին ծանոթանալու և դրանից պաշտպանվելու միջոցներ ձեռնարկելու համար:

8.16. Դատական քննության ընթացքում մեղադրանքի փոփոխության հարցի հետ սերտորեն առնչվում է նաև դատարանի կողմից դատական ակտ կայացնելիս սեփական նախաձեռնությամբ մեղադրանքը փոփոխելու հիմնախնդիրը:

8.17. Միանշանակ է, որ այդպիսի փոփոխությունը չի կարող լինել խստացման առումով, քանզի դատարանը դրանով արդարադատություն իրականացնող մարմնից կվերաձվի քրեական հետապնդում իրականացնողի, ինչպես նաև կխախտվի մեղադրյալի պաշտպանության իրավունքը, քանի որ նա կգրկվի նոր մեղադրանքից պաշտպանվելու բոլոր հնարավորություններից: Ուստի, դատարանի նախաձեռնությամբ մեղադրանքի փոփոխության գաղափարը գոյության իրավունք ունի միայն մեղմացման առումով:

8.18. Քրեական դատավարության տեսության մեջ և պրակտիկայում մշակված չափանիշների համաձայն՝ մեղադրանքը մեղմացման առումով համարվում է փոփոխված, եթե.

- մեղադրանքը վերաորակվում է քրեական օրենսգրքի հատուկ մասի ավելի մեղմ պատիժ նախատեսող հոդվածով (մասով, կետով),

- մեղադրանքից հանվում են ամբաստանյալին մեղասագրվող հանցավոր գործունեության առանձին դրվագներ,

- նվազեցվում է հանցագործությամբ պատճառված վնասի չափը,

- մեղադրանքից հանվում են ամբաստանյալի պատասխանատվությունը ծանրացնող կամ նրա համար բացասական նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

8.19. Հիմք ընդունելով այն սկզբունքը, որ դատարանը կաշկանդված չէ մեղադրանքի կողմի դիրքորոշմամբ, նման պրակտիկան երկար տարիներ համարվում էր ընդունելի և դիտարկվում էր բացառապես որպես հումանիզմի դրսևորում, քանի որ դրանով չէր վատթարանում ամբաստանյալի վիճակը և չէր խախտվում նրա պաշտպանության իրավունքը:

8.20. Այդուհանդերձ, նման մոտեցումը արդարացված էր միայն այն ձևավորած համապատասխան նախադրյալների գոյությամբ՝ լրացուցիչ նախաքննության ինստիտուտի առկայությամբ և մեղադրողի կողմից դատական քննության ընթացքում մեղադրանքը փոփոխելու հնարավորության բացակայությամբ:

Խորհրդային քրեադատավարական համակարգում հիմնադրված և անցումային ժամանակահատվածում ըստ էության էվոյուցիա չապրած ակտիվ դատարանի համար լիովին տրամաբանական էր սեփական նախաձեռնությամբ մեղմացնող մեղադրանքի անցնելը:

8.21. Դատական քննության ընթացքում մեղադրանքի փոփոխության հիմնախնդրի լուծման առումով քրեական արդարադատության ապագա համակարգը խարսխված է որակապես նոր հիմքերի վրա: Այն ժխտում է լրացուցիչ նախաքննության գաղափարը՝ դրա ցանկացած դրսևորմամբ և կատարելագործելով դատախազի կողմից մեղադրանքի փոփոխության հիմքերն ու պայմանները, մրցակցային դատավարության ձևաչափում դրան տալիս է ուրույն իմաստ և նշանակություն:

8.22. Ելնելով պասսիվ դատարանի կարգավիճակից, մրցակցության հիմքում ընկած գործառության թաժանման չափանիշից և դատական քննության սահմանների պահպանման հիմնարար կանոնից, Նախագիծը պետք է կյանքի կոչի հետևյալ հայեցակարգային սկզբունքը. դատական քննության ընթացքում մեղադրանքը կարող է փոփոխվել բացառապես այն սուբյեկտի կողմից, որն այդ մեղադրանքը պաշտոնապես ներկայացրել է դատարանին: Դատախազն օբյեկտիվորեն կրում է դատարան ներկայացրած մեղադրանքի հիմնավորվածության և ապացուցվածության դիսկը և մեկ անգամ օրենսդրական կարգավորման մակարդակով ստանում է այն փոփոխելու (իսկ գլոբալ առումով, քրեական քաղաքականության իրականացման տեսանկյունից՝ արդարացման դատավճռից խուսափելու) հնարավորություն, թեև զրկված չէ նաև մեղադրանքից ընդհանրապես հրաժարվելու իրավասությունից: Նման հնարավորությունը չօգտագործելու դեպքում դատարանն իրավունք չունի, առավել ևս պարտավոր չէ մեղադրողին «փրկել» արդարացման դատավճռից, քանի որ դա կհակասի դատական քննության փուլում դատարանի, որպես դատական իշխանություն և արդարադատություն իրականացնող մարմնի, դերին և նշանակությանը: Նույնիսկ ավելի մեղմ մեղադրանքով մեղադրական դատավճիռ կայացնելու դեպքում դատարանը կխախտի անմեղության կանխավարկածի սկզբունքը, քանի որ որոշում ընդունելիս

ընտրություն է կատարելու ոչ թե մեղադրյալի մեղավորության և անմեղության միջև, այլ միայն քննարկելու է, թե որ հանցանքի կատարման մեջ է մեղավոր անձը:

8.23. Դատական քննության փուլում դատարանի խնդիրն է ստուգել ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը և ապացուցվածություն: Եթե դատարանում ապացույցների հետազոտման արդյունքում դրանք չեն հաստատվում, ապա (անկախ իրական մեղադրանքի ավելի խիստ կամ ավելի մեղմ լինելու փաստից) դատարանը պարտավոր է կայացնել արդարացման դատավճիռ՝ որևէ պատասխանատվություն չկրելով նման որոշման հետևանքների համար:

8.24. Նշված կանոնից պետք է սահմափի հետևյալ բացառությունը.

դատարանը, չփոխելով մեղադրանքի հիմքում ընկած փաստական հանգամանքները, կարող է մեղադրանքի ծավալից հանել մեղադրյալի պատասխանատվությունը խստացնող (արարքը որակյալ դարձնող) և/կամ պատիժը ծանրացնող հանցակազմի հատկանիշները, ինչպես նաև մեղադրյալի համար բացասական նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Այս պարագայում գործում է այսպես կոչված կլանման սկզբունքը, երբ հանցակազմի որակյալ հատկանիշներ պարունակող մեղադրանքը ներառում է հասարակ («նոմինալ») մեղադրանքը և այդօրինակ, ինչպես նաև պատիժը ծանրացնող և բացասական այլ հանգամանքների բացառումը մեղադրանքից չեն խախտում մեղադրյալի պաշտպանության իրավունքը կամ կասկածի տակ չեն դնում դատարանի կողմից անմեղության կանխավարկածի պահպանումը:

Սուբսիդար մեղադրող²

8.25. Հիմք ընդունելով հանցագործության զոհի (տուժողի) իրավունքների իրական ապահովման, ինչպես նաև դատարանի դերի բարձրացման անհրաժեշտությունը, Նախագիծը հնարավոր է համարում դատական քննությունը

² ՀՀ Գլխավոր դատախազությունն առարկում է սուբսիդիար մեղադրողի ինստիտուտի դեմ (Հայեցակարգի 8.25-8.28 կետերը), այն պատճառաբանությամբ, որ սուբսիդիար մեղադրողի ինստիտուտն անհամատեղելի է ՀՀ Սահմանադրության 103 հոդվածի հետ, քանի որ հանրային մեղադրանքի գործերով մեղադրանքի պաշտպանությունը դատախազի բացառիկ իրավասությունն է:

շարունակել դատախազի կողմից մեղադրանքից հրաժարվելու դեպքում: Մասնավորապես, դատարանը կարող է շարունակել գործի քննությունը, եթե տուժողը, տվյալ պարագայում սուբսիդար մեղադրողը, պահանջում է դա և ստանձնում մեղադրանքի պաշտպանությունը: Այս ինստիտուտն ուղղված է ոչ միայն տուժողի շահերի առավել արդյունավետ ապահովմանը, այլև պետական մեղադրանքի որակի բարձրացմանը:

8.26. Տուժողի այս իրավունքի չարաշահման հնարավորությունը բացառելու համար նախատեսվում է, որ այս իրավունքից տուժողը կարող է օգտվել միայն դատարանի համաձայնությամբ: Դատարանը կարող է մերժել տուժողի միջնորդությունը, եթե գտնում է, որ այն ակնհայտ անհիմն է: Բացի այդ, մեղադրանքի «փոխակերպման» պարագայում այն չի կարող ընդգրկել տվյալ տուժողին ենթադրաբար հասցված վնասի հետ կապ չունեցող արարք և քրեաիրավական որակում:

8.27. Նույն սկզբունքներից ելնելով նախատեսվում է, որ դատախազի կողմից սկզբնական մեղադրանքն ավելի մեղմով փոփոխելու դեպքում, սուբսիդար մեղադրողը կարող է շարունակել պաշտպանել սկզբնական մեղադրանքը, ինչն էլ դատարանի համար կարող է հիմք հանդիսանալ սկզբնական մեղադրանքով դատական ակտ կայացնելու համար: Միաժամանակ տուժողի կողմից մեղադրանքը ստանձնելու դեպքում դրա պաշտպանությունն առավել պրոֆեսիոնալ կազմակերպելու համար անհրաժեշտ է պարտադիր նախատեսել տուժողի ներկայացուցչի մասնակցությունը:

8.28. Սուբսիդար մեղադրանքի ինստիտուտը նախատեսված է, մասնավորապես, Խորվաթիայի և Սլովենիայի քրեադատավարական օրենսդրությամբ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *Սանդրա Յանկովիչն ընդդեմ Խորվաթիայի* (գանգատ թիվ 38478/05) գործով հավանություն է տվել սուբսիդար մեղադրողի ինստիտուտին՝ որպես հանցագործության զոհի իրավունքների պաշտպանության արդյունավետ կառուցակարգի (տե՛ս նշված որոշման 50-րդ կետը):

Դատական ակտի կայացումը

8.29. Դատարանում քրեական գործի քննության տրամաբանական և անխուսափելի ավարտը դատական ակտի՝ արդարացման կամ մեղադրական դատավճռի կայացումն է: Արդարադատության իրականացման այս կարևորագույն ակտով որոշվում են ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության, նրա նկատմամբ պատիժ (այդ թվում համապատասխան պատժատեսակ և պատժաչափ) կիրառելու կամ չկիրառելու և այլ հարցեր: Բացի այդ, քրեական գործով կայացված դատավճիռը արտացոլում է դատարանի վերաբերմունքը գործի փաստական հանգամանքների, հետազոտված ապացույցների և կողմերի դիրքորոշումների նկատմամբ:

8.30. Ավանդաբար ընդունված է, որ դատավճիռ կայացնելիս դատարանի կողմից պարզաբանման ենթակա բոլոր հարցերը համալիր քննարկվում են դատական վիճաբանությունների փուլում և միասնական լուծում ստանում հրապարակվող դատական ակտում: Այդուհանդերձ, գործող օրենսգրքի 360 հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ հարցերը միմյանցից տարբերվում են իրենց բովանդակությամբ, խորությամբ և լուծման բարդությամբ, հետևաբար, դրանց քննարկումն ու լուծումը պահանջում է տարբերակված մոտեցում:

8.31. Այս կապակցությամբ Նախագծով առաջարկվում է սահմանել դատական ակտի կայացման և հրապարակման երկփուլ կարգ: Մասնավորապես, առաջին փուլում կողմերի և դատարանի համար քննարկման առարկա է դառնում միայն ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության հարցը, որի լուծումից կախված երկրորդ փուլում որոշվում են դատավճռի կոնկրետ տեսակից (արդարացման կամ մեղադրական) օրգանապես և տրամաբանորեն բխող մյուս հարցերը:

8.32. Այսպես, մեղադրական վերդիկտի հրապարակումից հետո հրավիրված լրացուցիչ դատական նիստում քննարկման առարկա են դառնում ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելու կամ չնշանակելու, նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները ուսումնասիրելու, կոնկրետ պատժատեսակը կամ պատժաչափը ընտրելու, քաղաքացիական հայցն

ամբողջությամբ կամ մասնակի բավարարելու, պատճառված գույքային վնասը հատուցելու, խափանման միջոցը պահպանելու և այլնի հետ կապված հարցեր:

8.33. Արդարացման վերդիկտի հրապարակման դեպքում լրացուցիչ դատական նիստում քննարկվում են ամբաստանյալի ռեաբիլիտացիայի հետ կապված, մասնավորապես, նրան անօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու կամ դատապարտման հետևանքով պատճառված վնասի համար ամբողջ ծավալով գույքային և բարոյական վնասի հատուցում, այդ թվում՝ իրական հնարավոր բաց թողնված օգուտները ստանալու հարցերը:

8.34. Իրավական նման կարգավորումն ունի եռակի դրական արժեք:

Առաջինը, այն դատավարության մասնակիցներին հնարավորություն է տալիս ավելի լուրջ ուշադրություն դարձնել դատավճռի կայացման երկրորդ փուլում քննարկվող հարցերին, հատկապես՝ պատժի նշանակման մասով: Այս կառուցակարգը առավել մեծ կարևորություն է ստանում արագացված վարույթի պարագայում, որի շրջանակում ձևավորվում է անձը բնութագրող, պատիժը ծանրացնող և մեղմացնող հանգամանքների վերաբերյալ ապացույցների հետազոտման տրամաբանական ընթացակարգ:

Երկրորդ, պաշտպանության կողմին թույլ է տալիս մշակել և իրացնել ավելի ճկուն, երկաստիճան մարտավարություն՝ առանց դիրքորոշման մեջ ներքին հակասություն ունենալու վտանգի: Դրանով առավել ամբողջապես է իրացվում անձի պաշտպանության սահմանադրական իրավունքը:

Երրորդ, այս ճանապարհով լուծում է ստանում Եվրոպական դատարանի նախադեպային որոշումներում տեղ գտած այն հիմնարար գաղափարը, որ արդարացվածի համար պետք է նախատեսվեն հատուցում ստանալու հնարավորինս մատչելի և արագ ընթացակարգեր:

9. Դատական վերանայման հարցեր

9.1. Դատական վերանայման համակարգի կառուցման ընդհանուր սկզբունքները պետք է շարունակեն լինել *սահմանափակ վերանայման* տիրույթում: Միևնույն ժամանակ, մի կողմից պետք է սահմանվեն առանձին բացառություններ սահմանափակ վերանայման տրամաբանությունից, իսկ, մյուս կողմից, դատական վերանայման ընդհանուր կառուցակարգերը և ընթացակարգերը պետք է զարգացվեն ու լրամշակվեն՝ այն հաշվով, որ առավել համահունչ լինեն սահմանափակ վերանայման տրամաբանությանը:

Դատական վերանայման եղանակների կազմ.

9.2. Դատական վերանայման եղանակների կազմում պետք է լինեն (ա) սահմանափակ վերաքննությունը, (բ) վճռաբեկությունը (սովորական եղանակներ), (գ) նոր հանգամանքներով վերանայումը և (դ) հիմնարար խախտումներով վերանայում:

Նոր հանգամանքներով վերանայման կառուցակարգը պետք է ներառի թե՛ փաստական և թե՛ իրավական բնույթի հանգամանքները, այսինքն՝ ներկայիս նոր երևան եկած և նոր հանգամանքներով վերանայումը:

Վերաքննություն.

9.3. Վերաքննիչ դատարանի դատավարական գործունեությունը կառուցվում է սահմանափակ վերաքննության հայեցակարգով, ըստ որի՝ վերանայվում է միայն այնքանը, որքանը բողոքարկվել է:

9.4. Այս կանոնից բացառություն է այն դեպքը, երբ վերաքննիչ դատարանը բողոքի քննության ընթացքում հայտնաբերում է նյութական կամ դատավարական օրենքի հիմնարար խախտումներ: Այս դեպքում վերաքննիչ դատարանը դատական ակտ կայացնելիս կարող է դուրս գալ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների շրջանակից:

9.5. Վերաքննիչ դատարանում ապացույցները հետազոտվում են կա՛մ կողմի միջնորդությամբ, կա՛մ դատարանի նախաձեռնությամբ: Նոր ապացույցների հավաքումը և հետազոտումը կատարվում է բացառապես կողմի միջնորդությամբ, եթե նա ներկայացնում է այդ ապացույցը նախկինում չներկայացնելու ողջամիտ պատճառներ:

9.6. Գործի քննությունը վերաքննիչ դատարանում կատարվում է կա՛մ ընդհանուր, կա՛մ պարզեցված ընթացակարգով: Պարզեցված ընթացակարգով գործի քննությունը կատարվում է միայն դատարանի նախնական որոշմամբ, և եթե կողմերից որևէ մեկը չի ներկայացրել ապացույցների անմիջական հետազոտման միջնորդություն:

9.7. Վերաքննիչ դատարանը պետք է իրավունք ունենա վերացնելու այն դատական սխալները և խախտումները, որոնք իր դատավարական իրավասության սահմաններում կարող է վերացնել: Այն դեպքում, երբ խախտումը կարող է վերացվել միայն առաջին ատյանի դատարանի կողմից (առաջին հերթին՝ քրեադատավարական օրենքի էական խախտում), վերաքննիչ դատարանը պետք է իրավունք ունենա դատավճիռը բեկանելով՝ գործն ուղարկել առաջին ատյանի դատարան:

9.8. Վերաքննիչ դատարանը պետք է լիազորված լինի բեկանել մեղադրական դատավճիռը և կայացնել արդարացման դատավճիռ, սակայն չպետք է իրավասու լինի արդարացման դատավճիռը բեկանել և կայացնել մեղադրական դատավճիռ: Այս արգելքը կլուծի դատապարտյալի՝ դատական վերանայման սահմանադրական իրավունքի ապահովման հետ կապված՝ ներկայում գոյություն ունեցող խնդիրը:

Վճռաբեկություն.

9.9. Ի տարբերություն դատական համակարգի ստորադաս օղակների՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, արդարադատության հիմնարար գործառույթի հետ մեկտեղ, ունի նաև հատուկ սահմանադրական լիազորություն, այն է՝ օրենքների միատեսակ

կիրառության ապահովումը: Այդ լիազորությունը հաջողությամբ իրականացնելու համար Վճռաբեկ դատարանը պետք է գործի որպես «իրավունքի դատարան»:

9.10. Վճռաբեկ բողոքների ընդունելության պայմանները սկզբունքորեն անհրաժեշտ է պահպանել, քանի որ դրանք հնարավորություն են տալիս Վճռաբեկ դատարանին չծանրաբեռնել առերևույթ հիմնավորված դատական ակտերի վերանայման պարտականությամբ: Միևնույն ժամանակ, ցմահ ազատազրկված անձանց բողոքարկման երկու հնարավորություն տրամադրելու իրավական արժեքը պետք է գերակայի Վճռաբեկ դատարանն առերևույթ հիմնավորված դատական ակտերի վերանայման պարտականությամբ չծանրաբեռնելու իրավական արժեքի նկատմամբ: Ուստի, անհրաժեշտ է սահմանել ազատ վերանայման ռեժիմ ի շահ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց բերված բողոքների համար:

9.11. Գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերաբերյալ վերաքննիչ դատարանի որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և բողոքարկման ենթակա չէ, բացառությամբ այն դեպքի, երբ վերաքննիչ դատարանն անձի նկատմամբ կալանավորումն ընտրում է որպես խափանման միջոց: Միևնույն ժամանակ միջանկյալ դատական ակտերի վրա վճռաբեկ դատարանի՝ իրավունքի զարգացման գործառույթը տարածելու նպատակով առաջարկվում է հետևյալ կառուցակարգը. եթե վերաքննիչ դատարանը գալիս է այն համոզման, որ առկա է օրենքի միատեսակ կիրառության խնդիր, իրավասու է իրեն բողոքարկված, սակայն դեռ չքննված միջանկյալ դատական ակտի վերանայման միջնորդությամբ դիմել վճռաբեկ դատարանին:

9.12. Սահմանափակ վերանայման հայեցակարգից ելնելով՝ Վճռաբեկ դատարանում պետք է շարունակի գործել այն սկզբունքը, որ վերաքննիչ դատարանում չներկայացված փաստարկը վճռաբեկության կարգով չի կարելի ներկայացնել: Սակայն այս սկզբունքից պետք է բացառություն արվի օրենքի հիմնարար խախտումների մասով: Այլ կերպ՝ եթե վճռաբեկ դատարանում կողմը առաջին անգամ պնդում է, որ առաջին ատյանի դատարանում թույլ է տրվել հիմնարար, արդարադատության էությունը խաթարող խախտում, ապա խախտման բնույթի վերաբերյալ կողմի գնահատականին համաձայնելու դեպքում Վճռաբեկ

դատարանը պետք է քննության առնի տվյալ փաստարկը: Այս դրույթի հիմնավորումն այն է, որ հիմնարար խախտումները վերացնելու իրավական արժեքը պետք է գերակայի սահմանափակ վերանայման կառուցակարգերի միջոցով կողմերի կարգապահությունն ապահովելու իրավական արժեքի նկատմամբ:

Բացառիկ վարույթներ.

9.13. Բացառիկ վարույթներով գործը քննող դատարանը որոշվում է «+1» սկզբունքով, այսինքն՝ բողոքը բերվում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտ կայացրած դատարանի վերադաս դատարան:

Ա/ Նոր հանգամանքներով վարույթ

9.14. Նոր հանգամանքներով վերանայման վարույթը պետք է ներառի թե՛ փաստական և թե՛ իրավական բնույթի հիմքերը, այսինքն՝ ներկայիս նոր երևան եկած և նոր հանգամանքներով վերանայման հիմքերը:

9.15. Հիմքերի շրջանակն անհրաժեշտ է ընդլայնել՝ ներառելով հանցանքի օրենսդրական ապաքրեականացումը, ինչպես նաև տվյալ վարույթի հետ կապված հանցավոր արարքների հաստատումը քրեական հետապնդումը ոչ-արդարացնող հիմքով դադարեցնելու վերաբերյալ որոշմամբ:

9.16. Նոր հանգամանքներով վարույթի կառուցակարգը պետք է կիրառվի նաև մինչդատական վարույթի ժամանակ ընդունված եզրափակիչ ակտերի նկատմամբ: Այդ դեպքում ևս պետք է գործի «+1» սկզբունքը և դիմումը քննի համապատասխան առաջին ատյանի դատարանը: Մինչդատական վարույթում կարճված գործը նորոգելու նկատմամբ դատական վերահսկողությունը կրկին դատվելու անթույլատրելիության սահմանադրական արժեքի կարևոր երաշխիք է:

Բ/ Հիմնարար խախտումներով վերանայում.

9.17. Անհրաժեշտ է կոնկրետացնել հիմնարար խախտումներով վարույթի նորոգման հիմքերը: Դրանք պետք է հարաբերականորեն որոշակի լինեն, ինչպես գործող քրեական դատավարության օրենսգրքով դատավարական օրենքի էական խախտման հիմքերը: Այս հարցում իրավական որոշակիության բացակայությունը կոնկրետ գործերով կարող է հանգեցնել արդար դատաքնության Կոնվենցիոն իրավունքի խախտման արձանագրման: Բանն այն է, որ համաձայն Ստրասբուրգի նախադեպային իրավունքի՝ հիմնարար խախտման հիմքը շատ ավելի բարձր չափանիշ է ենթադրում, քան սովորական եղանակով վերանայման հիմքը: Հակառակ դեպքում կխաթարվի օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի կայունության առավել բարձր աստիճանի կանխավարկածը:

